ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Մ. թ. ա. V դարի վերջերից մինչև մ. թ. III դարի սկիզբը)

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հայաստանի դրամական տնտեսությունը մ. թ. ա. VI—V դարերում զարգանում էր Աքեմենյան Իրանի դրամա-կշռային սիստեմով։ Դրամների թողարկման իրավունքը վերապահված էր բացառապես աքեմենյան արքաներին։ Հիմնական միավորը ոսկու գծով կոչվում էր դահեկան կամ դարեհկան (ΔΑΡΕΙΚΟΣ), տրված աքեմենյան Դարեհ I թագավորի անունից։ Իրականում աքեմենյան ոսկյա դրամների թողարկումը սկսվել էր դեռևս Կյուրոս Մեծի իշխանության տարիներից, բայց Դարեհ I-ի օրոք (524—484) այն առավել բնորոշ էր դարձել։ Դրանք դրվագվում էին բարձրորակ ոսկուց։ Յուրաքանչյուր միավորի օրինական քաշը սահմանված էր 8,40 գրամ և կազմում էր հին պարսկական «ՄՆԱ» (MNA), հայերենում «մնաս», կշռային չափի $\frac{1}{60}$ *մասը։ Արծաթի գծով հիմնական միավորը Հայաստանում կոչվում էր «սիկղ» (ΣΙΓΛΟΣ), որը օրենքով սահմանված էր 5,60 գրամ, կազմելով «մնասի»* $\frac{1}{100}$ *մասը*[1]։

Առևտրում մեկ ոսկյա դահեկանը փոխանակվում էր 20 արծաթյա սիկղով։ Այլ կերպ ասած, 8,40 գրամ ոսկին ընդունվում էր 112 գրամ արծաթի դիմաց։ Ինչպես դահեկանները, այնպես էլ սիկղները նախապես կնքվում էին միայն մի կողմից։ Հատուկ կաղապարներում ոսկին ձուլում էին սահմանված կշռային չափերով և շիկացած կլորակ հատաձույլների վրա դրոշմում էին աքեմենյան արքայի փորագրված պատկերը սխեմատիկ տեսքով։ Արյաց միապետը պատկերվում էր ողջ հասակով, մի ոտքով ծնկաչոք, նետ ու աղեղ և կամ գայիսոն բռնած, գլուխը զարդարված ճառագայթաձև թագով, դեմքը մորուքավոր, մարմինը կրծքից մինչև ոտքերը արքայական ծիրանու մեջ։ Այդ դրամները գրություններ չունեին իրենց վրա[2]։ *Սակայն ինչպես բուն Իրանում, այնպես էլ նրա գերիշխանության ներքո անցած Հայաստանում դրամական շրջանառությունը զարգացման թույլ ընթացքի մեջ էր։ Ապրանքափոխանակությունը կատարվում էր առավելապես բնատուր ձևով և թանկարժեք մետաղների կշռային ձուլվածքներով։ Ոսկու և արծաթի փոխհարաբերությունը տարբեր վայրերում տարբեր*

---

[1] Fr. Schrotter, Wörterbuch der Münzkunde, Berlin, 1930, *էջ 120—121, 632։* А. Н. Зограф, Античные монеты, „Материалы и исследования по археологии СССР", М.—Л., 1951, *էջ 42։* J. De Morgan, Manuel de Numismatique Orientale de l'Antiquité et du Moyen Age, tome I, Paris, 1923—1936, *էջ 11, 14։* „Реальный словарь классической древности Фр. Любкера", СПб.—Москва, 1888, *էջ 1202։*

[2] Barclay V. Head, Historia Numorum a Manuel of Greek Numismatics. London, 1963, *էջ 827—829։*

էր և միշտ փոփոխական, կապված շուկայական դների փոփոխման հետ։ Մասնավորապես մ. թ. ա. VI դարում այն ընդունված էր 1:13 $\frac{1}{3}$ չափով[3]։ Հայաստանի առևտուրը զարգանում էր Իրանի միջազգային առևտրի ոլորտում և կապված էր գլխավորապես Միջագետքի ու Փոքր Ասիայի շուկաների հետ։ Դրամների թողարկումը Աքեմենյանների առաջ ծառացած էր հիմնականում հունական աշխարհի հետ առնչված առևտրի և Փոքր Ասիայում գտնվող վարձկան զորքերի պահանջով։ Փոքրասիական վաճառաշահ քաղաքներում, ի տարբերություն Իրանի և Հայաստանի, դրամական շրջանառությունը զարգացման անհամեմատ բարձր վիճակում էր, օժտված դրամական տնտեսության երկարամյա փորձով։ Եվ այդ իրողությունը միանգամայն օրինաչափ էր։ Էգեյան ծովի ավազանում ու Փոքր Ասիայի Հոնիական ափերին էր, որ դեռևս մ. թ. ա. VII դարում ծագեցին արխաիկ պատկերատիպի վաղագույն դրամները։ Այդ վայրերում ապրանքափոխանակությունը կատարվում էր միաժամանակ տարբեր դրամական սիստեմներով (էգինյան, միլետյան, ֆոկեյան, ատտիկյան), իսկ մ. թ. ա. VI դարի վերջերից արդեն լիապես յուրացված էր նաև աքեմենյան սիստեմը, որի տվյալներով դահեկաններ ու սիկղներ էին թողարկվում Կիլիկիայում, Պանֆիլիայում, Լիկիայում, Կարիայում, Հոնիայում, Միլիայում, ինչպես նաև Բոսֆորի ափի քաղաքներում[4]։ Հայկական լեռնաշխարհում, մանավանդ նրա այն մասերում, որոնք հեռու էին միջազգային առևտրի ոլորտից, իշխում էր ապրանքափոխանակության բնատուր ձևը։



Աքեմենյան ոսկյա դրամ, IV դ. մ. թ. ա. (բոլոր դրամները մեծացված են 3 անգամ)։

Այս ընդհանուրից բացի Հայաստանում հայտնաբերվել են հատ ու կենտ նմուշներով արխաիկ պատկերատիպի արծաթյա դրամներ, որոնք, սակայն, հանդիսանում են բացառիկ կարգի վկայություններ և հնարավորություն չեն ընձեռում դատելու հայկական շուկաներում իրենց ունեցած դերի ու նշանակության մասին։ Այդ դրամներից մեկը աքեմենյան սիկղ է, գտնված նախկին Երևանի նահանգում։ Մյուսը VI—V դարերի ատտիկյան չորեքդրամյան է, որը դրվագվել է Աթենք քաղաքում և հավանաբար առևտրի շնորհիվ բերվել է Սիսիան, ուր

[3] А. Н. Зограф, Античные монеты, էջ 42։
[4] M. Ernest Babelon, Les Perses Achemenides, les Satrapes et les Dynastes tributaires de leur Empire Cypre Phenicie, Paris, 1893, էջ IX—XIII։

հայտնաբերվել է տեղի շինարարական աշխատանքների միջոցին։ Երրորդ և չորրորդ վկայությունները բացահայտվել են 1956 թ. Երեբունի ամրոցի հնագիտական պեղումների շնորհիվ և վերաբերում են VI—V դարերին։ Այս վերջինները երկու նույնանման, սակայն տարբեր կնիքներով դրվագված խիստ փոքր արժեչափի (արծաթի քաշով մոտ 0,80 գրամ) դրամական միավորներ են, որոնք արխաիկ շրջանում մասսայաբար թողարկվում էին Փոքր Ասիայի հունական քաղաքներում, առավելապես Միլետում, և հայտնի էին նաև «Միլետյան» դրամներ անունով։ Արտակարգ այս տվյալները դեռևս չեն կարող փոխել վերևում նշված մեր պատկերացումները Հայաստանում VI—V դարերում իշխող ապրանքա-դրամական հարաբերությունների և դրամական շրջանառության բնորոշման մասին։

* * *

Աքեմենյանների տիրակալության վերջին շրջանում ապրանքային արտադրության առաջընթացը, մասնավորապես տարբեր բնույթի արհեստների զարգացումը, ներքին շուկայի ընդլայնումը պայմանավորել էին դրամների թողարկման նոր կարգ։ Տեղական սատրապները մ. թ. ա. V դարի վերջերից և առավելապես IV դարում նվաճել էին իրենց կողմից սեփական դրամներ թողարկելու իրավունքը։ Այդ դրամների շարքում պահպանվել են այնպիսի դրամական միավորներ, որոնք թողարկվել են Հայաստանի աքեմենյան սատրապներ Տիրիբազի և Օրոնտեսի կողմից Փոքր Ասիայում։ Տիրիբազի դրամները դրվագվել են Կիլիկիայի Իսոս, Սոլի, Մալոս և Տարսոն քաղաքներում, մ. թ. ա. 386—380 թթ.։ Դրանց վրա նշված են ինչպես Տիրիբազի, այնպես էլ հիշյալ քաղաքների անունները, ըստ որում թե՛ միայն հունարեն և թե՛ երկլեզվյան՝ հունարեն ու արամեերեն արձանագրություններով։ Տիրիբազի դրամները կրում էին իրենց վրա Ահուրամազդայի, Բահաղի, Հերակլեսի, Անահիտի, Դիոնիսի կարծեցյալ պատկերները, ինչպես նաև իրեն՝ Տիրիբազի դիմանկարները, ներկայացված դասական արվեստի ռեալիստական ոճով[5]։ Կշռային տվյալներով դրանք պատկանում են աքեմենյան սիստեմին, ըստ որում թողարկվել են բացառապես արծաթից, մեծ մասամբ կրկնակի դրախմաներ (11,20 գրամ) և այդ նույն սիստեմի փոքր արժեչափի միավորներ՝ օբոլոսներ (ΟΒΟΛΟΣ)։ Ծագելով Կիլիկիայում, Տիրիբազի դրամները շրջանառության մեջ են եղել ոչ միայն այնտեղ, այլև Փոքր Ասիայի ու Միջագետքի տարանցիկ առևտրի համար կարևոր նշանակություն ունեցող Ծոփքի և հավանաբար Փոքր Հայքի տնտեսական կենտրոններում, որոնք ենթակա էին նրա անմիջական իշխանությանը։

Արևելյան Հայաստանի սատրապ Օրոնտեսի (Երվանդ) դրամները հայտնի են ոսկյա, արծաթյա և պղնձյա օրինակներով, թողարկված մ. թ. ա. 362 թ. Լամպսակ, Կլազոմեն և այլ քաղաքներում։ Դրանց թողարկումը պայմանավորված էր տեղական պահանջներով։ Օրոնտեսի դրամների վրա դրոշմվել են հեթանոսական աստվածներ Զևսի, Աթենասի պատկերները և արևի պաշտամունքին վերաբերող խորհրդանշաններ, ինչպես նաև աքեմենյան տիրակալների ու իրեն՝ Օրոնտեսի դիմանկարները[6]։ Սակայն ո՛չ իրենց ծագմամբ և ո՛չ էլ շրջա-

[5] George Francis Hill, M. A., Catalogue of the Greek coins of Lycaonia, Isauria and Cilicia, London, 1900, էջ 90, No. 3, էջ 100, No. 28, էջ 148, No. 26, էջ 149, No. 27, էջ 164, No. 12, տախտ. XV, No. 3, տախտ. XXVI, No. No. 2, 3, տախտ. XXIX, No. 1.

[6] M. Ernest Babelon, Inventaire sommaire de la collection Waddington, Paris, 1898, էջ 75, No. No. 1361—1363; տախտ. III, No. No. 1—3.



Տիրիբազ, արծաթյա դրամ, IV դ. մ. թ. ա.



Օրոնտես, ոսկյա դրամ, IV դ. մ. թ. ա.

նառության ոլորտով Օրոնտեսի դրամները Հայաստանի հետ չեն կապվում։ Նրանք թողարկվել են Միդիայում և Հոնիայում, ուր Օրոնտեսը մի որոշ ժամանակ սատրապական իշխանություն է ունեցել։ Սատրապական դրամներով մեզ են հասել միայն նրանց պաշտոնական դիմանկարները և իշխող դաղափարներին վերաբերող այն խորհրդանշանները, որոնց մասին դրամներից բացի այլ վկայություններ չեն պահպանվել։

* * *

IV դարի վերջերից Հայաստանն ընդգրկվում է հելլենիստական դրամների շրջանառության ոլորտը։ Հայկական շուկաներն են թափանցում ատտիկյան սիստեմի ոսկյա ու արծաթյա դրամները։ Վերջիններս լայն ճանաչում էին գտել միջազգային առևտրում։

Ատտիկյան սիստեմի հիմնական միավորը ոսկու գծով կոչվում էր ստատեր (ΣΤΑΤΗΡ), հայերենում՝ «սատեր», որի օրինական կշիռը սահմանված էր 8,60

գրամ։ Ոսկու և արծաթի փոխհարաբերությունը հելլենիստական դարաշրջանում արդեն դարձել էր 1:10 չափով։ Հիմնական միավորն արծաթի գծով կոչվում էր դրախմա (ΔΡΑΧΜΗ)՝ 4,36 գրամ օրինական քաշով, որը հայկական աղբյուրներում հիշատակվում է դրաքմա կամ դրամ անուններով։ Առևտրում մեկ ոսկյա ստատերը փոխանակվում էր 20 արծաթե դրախմայի հետ[7]։ Ընդհանուր առումով ատտիկյան սիստեմի կշռային ստորաբաժանումների շարքում փոքր միավորները հանդիսանում էին քաղկոսը (ΧΑΛΚΟΥΣ)՝ 0,091 գրամ, և այնուհետև օբողոսը կամ օբոլը (ΟΒΟΛΟΣ)՝ 0,728 գրամ։ Մեկ օբողոսը կազմված էր 8 քաղկոսից։ Ամենամեծ միավորը տաղանտն էր (ΤΑΛΑΝΤΟΝ), որը կշռում էր 26196,2 գրամ և դրանից հետո՝ մնասը (ΜΝΑ) 436,60 գրամ։ Մեկ տաղանտը ներկայացնում էր 60 մնաս։ Սակայն հիմնական դրամային միավորը, ինչպես նշեցինք, դրախման էր, որի օրինական քաշը հավասար էր վեց օբողոսի, այսինքն՝ 4,366 գրամի։ Այստեղից էլ մեկ տաղանտը կշռային չափով հավասար էր 6000 դրախմայի կամ 36000 օբողոսի և կամ թե 288000 քաղկոսի, իսկ մեկ մնասը պարունակում էր իր մեջ 600 օբողոս կամ 4800 քաղկոս[8]։ Խոշոր քաշի միավորները՝ տաղանտը և մնասը դրամական շրջանառության մեջ ունեին առավելապես հաշվային նշանակություն։ Ոսկյա դրամներ համեմատաբար քիչ էին թողարկվում, հաշվում էին ոսկով, բայց վճարումը կատարվում էր հիմնականում արծաթյա դրախմաներով (դրամյաններով) և տետրադրախմաներով (չորեքդրամյաններով), որոնք դրվագվում էին մասսայաբար։ Չորեքդրամյանի (ΤΕΤΡΑΔΡΑΧΜΟΝ) օրինական կշիռը կազմում էր 17,46 գրամ։ Սակայն մինչև IV դարի վերջը

Ալեքսանդր Մակեդոնացի, չորեքդրամյան, IV դ. մ. թ. ա.

աքեմենյան դրամական սիստեմը դեռևս չէր կորցրել իր տեղական նշանակությունը։ Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ երբ Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը նվաճել էին Իրանը, բռնագրավված ոսկու պաշարներից դրվագում էին կրկնակի դահեկաններ, նույն հին պարսկական կշռային սիստեմի սկզբունքով և անցյալում ընդունված աքեմենյան դրամների պատկերատիպով։ Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացուն ենթակա սատրապ Միթրե-

[7] Fr. Schrötter, Wörterbuch der Münzkunde, էջ 46—48, 656—657, А. Н. Зограф. Антические монеты, էջ 43։

[8] „Реальный словарь классической древности Фр. Любкера", էջ 1202.

նեսին (Միհրան) վերագրված արծաթյա դրամները[9] նույնպես իրենց կշռային տվյալներով աքեմենյան կրկնակի դրախմանոցներ էին։ Դրանք թողարկվել են 331—330 թթ.։ Արծաթյա այդ ստատերների մի կողմին պատկերված է Անահիտը, բաղմած երկու թևավոր առյուծներով (սֆինքս) զարդարված դահին, անշան թեքությամբ դեպի ձախ։ Դիցուհին մինչև պորտը դիտվում է մերկամարմին։ Գլխին ունի թագ, աջ ձեռքին՝ շուշան, կոնքերից մինչև ոտքերը նուրբ ծածկոցի մեջ է։ Այդ դրամի հակառակ կողմին պատկերված է Աթենասը, կանգնած հանդիպահայաց, և պարզել է իր աջը պսակաբեր Նիկեի արձանիկով, ներքևում՝ ծառ, իսկ ձախ ձեռքը՝ վահանին։ Բայց այս կարգի դրամները շրջանառության համար բնորոշ չէին։ Նրանց թողարկումը գնալով դադարում էր, մինչդեռ առատորեն տարածվում էին Մակեդոնացու արծաթյա դրախմանոցներն ու տետրադրախմանոցները, որոնց վրա, որպես կանոն, դրոշմված էին կիսաաստված համարվող Հերակլեսի գլուխը Ալեքսանդրի դիմագծերով և աստվածահայր Զևսի կերպարը իր պաշտամունքի խորհրդանշաններով։ Հայաստանի վաճառաշահ քաղաքներում ամենուրեք հայտնի էին նմանօրինակ արծաթյա դրամները[10]։ Վերջիններից բացի, Ալեքսանդրի անվան հունատառ գրությամբ շուկա էին մտնում նաև ոսկյա դրամներ Աթենասի և Նիկեի պատկերներով, որոնք ձեռքից ձեռք անցնելով տարածում էին հելլենիստական գաղափարները[11]։

Հետագայում միջազգային առևտրի բերումով Հայաստան են թափանցում սելևկյան, ինչպես նաև պարթևական արծաթյա դրամները։ Սրանց շրջանառությունն արդեն մ. թ. ա. II դարի վերջերից ընթանում է Հռոմի հանրապետական դրամների հետ միաժամանակ[12]։

Հայաստանի դրամական տնտեսության զարգացման այս փուլում (մ. թ. ա. III—II դարերում) ծագում են հայ ազգային դրամների անդրանիկ օրինակները։ Նրանք թողարկում են Ծոփքում և Փոքր Հայքում առաջացած հայկական թագավորությունները[13]։

Սեփական դրամ կտրելու իրավունքը ինքնուրույնության վկայում է քաղաքական անկախության մասին։ Սակայն այդ իրավունքը խիստ սահմանափակ էր։ Այս շրջանի հայկական դրամները ոչ թե ոսկուց կամ արծաթից էին, այլ պղնձից, որոնք ունեին զուտ տեղական նշանակություն և ներքին շուկայի ոլորտից դուրս չէին անցնում։ Դրանով էլ հավաստվում է այն իրողությունը, որ Փոքր

---

[9] Generalconsul Dr. Otto Blau, Die Herren Von Sophene und deren Münzen, Numisamatische Zeitschrift, IX, 1877, Wien, էջ 99—102։

[10] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана, „Труды" общества обследования и изучения Азербайджана, вып. 3, Баку, 1926, էջ 15։

[11] L. Müller, Numismatique d'Alexandre le Grand, Basel—Stuttgart, 1957.

[12] Ա. Շահնազարյան, Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձը։ Առանձնատիպ Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատությունների» հատոր 2-ից, Երևան, 1949, էջ 9։

[13] E. Q. Visconti, Iconographie Grecque, tome second, Paris, MDCCCXI, էջ 243—273, տախտ. XLV; Josepho Eckhel, Doctrina Numorum Veterum, Paris, I, De Numis Urbium, Populorum, Recum. Vol. III, Editio Secunda, Vindobonae, MDCCCXXVIII, էջ 202—208, 247—248, Victor Langlois, Numismatique Générale de l'Armenie, Paris, MDCCCLIX, էջ 11—12; Generalconsul Dr. Otto Blau, Die Herren Von Sophene und deren Münzen, էջ 113—114; J. Friedlaender, Satrapenmünzen, Zeitschrift für Numismatik, IV Band, Berlin, էջ 266—267; M. Ernest Babelon, Les Rois de Syrie, d'Arménie et de Commagene, Paris, 1890, էջ CXCI—CC, տախտ. XXIX.



Մոփքի թագավորների դրամներից. 1—Արշամես, 2—Աբդիսսարես, 3—Քսերքսես։



Արտաշիսյանների դրամներից, 4—Տիգրան I, 5—Տիգրան II, 6—Արտավազդ II։

Հայքի ու Ծոփքի մեջ III—II դարերում ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը այնպիսի աստիճանի էր հասել, որ մանր առևտուրն անդամ կատարվում էր դրամով, մի հանգամանք, որ կարող է առաջանալ դրամի ֆունկցիոնալ նշանակության լիակատար ծավալման, քաղաքային կյանքի և նրա առևտրի խորացման պայմաններում։

Ծոփքի և Փոքր Հայքի հայկական դրամներն իրենց կշռային տվյալներով ատտիկյան էին։ Դրանք թողարկվել են Քարասպես (260—240), Արշամես (240—210), Արդիսսարես (210—190?), Քսերքսես (190—170) թագավորների իշխանության տարիներին։ Այդ դրամները, ունենալով տեղական բնորոշություն, արտացոլում են նաև կապակցություններ սելևկյան, պարթևական և կապադովկյան դրամների հետ։ Հելլենիստական դարաշրջանին յուրահատուկ հայկական այդ դրամների վրա պատկերված են մի կողմից Ծոփքի և Փոքր Հայքի թագավորների դիմանկարները, իսկ մյուս կողմից պաշտամունքային խորհրդանշաններ՝ արծիվ, ձի, ինչպես նաև Հաղթություն, Աթենաս և Անահիտ դիցուհիների կերպարները։ Վերջիններիս շուրջ նշվում էին արձանագրություններ, ըստ որում բացառապես հունարեն. դրանք հիմնականում միապետների անուններն էին ու երբեմն նաև նրանց հայրանունները։ Հեթանոսական պատկերների հետ միասին միապետի անձնանվան հիշատակումը դրամների վրա արտացոլում էր թագավորի պաշտամունքի դաղափարը հայ պետականության զարգացման այս շրջանում։ Ծոփքի և Փոքր Հայքի հայ թագավորների դրամները թողարկվել են հավանաբար Արշամաշատ, Արկաթիակերտ և այլ հայկական քաղաքներում։

* * *

Երկրի հետագա զարգացումը, նրա քաղաքական-տնտեսական հզորացումը II—I դարերում պայմանավորեց հայկական դրամների ավելի ծավալուն թողարկում Արտաշիսյանների օրոք։ Հայաստանի դրամական շրջանառության մեջ նշանակալից են դառնում տեղական դրամները, որոնք միջազգային ճանաչում գտան մասնավորապես Տիգրան Մեծի (95—56) թագավորության տարիներին։ Ըստ նորագույն դասակարգման[14] Արտաշիսյաններից դրամներ են թողարկել հետևյալ արքաները.

Տիգրան I (123—96)	պղնձյա դրամներ
Տիգրան Մեծ (95—56) . . .	արծաթյա ու պղնձյա դրամներ
Արտավազդ II (56—34) . .	արծաթյա ու պղնձյա դրամներ
Արտաշես II (30—20) . . .	պղնձյա դրամներ
Տիգրան III (20—8)	արծաթյա ու պղնձյա դրամներ
Տիգրան IV (8—5)	պղնձյա դրամներ
Տիգրան և Էրատո (2—1) . .	պղնձյա դրամներ
Արտավազդ IV (4—6 մ. թ.) .	արծաթյա դրամներ
Տիգրան V (շուրջ 6 թ. մ. թ.) .	պղնձյա դրամներ

Սրանցից յուրաքանչյուրին պատկանող դրամների վրա մի կողմից դրոշմված էր արքայի դիմանկարը։ Ըստ էության դրամներով է, որ պահպանվել են

[14] Paul Z. Bedoukian, A Classification of the Coins of the Artaxiad dynasty of Armenia, Reprinted from the American Numismatic Society, Museum Notes, 14, New York, 1968, տպագ. IX—XI.

Արտաշիսյան արքաների պաշտոնական դիմանկարները, կերտված նրանց անհատականություններին բնորոշ գծերով։ Հելլենիստական Հայաստանում շրջանառության մեջ եղած բազմատեսակ օտարամուտ դրամների շարքում հայոց ազգային դրամական միավորները ճանաչելի էին դառնում առաջին իսկ հայացքից նրանց վրա պատկերված արքայական այն թագի ձևով, որ կրում էին Արտաշիսյան թագավորները իրենց գլուխներին։ Արքայական այդ ինքնատիպ թագի ձևը ծնվեց Հայաստանում, Արտաշիսյանների իշխանության վաղ շրջանում և կատարյալ դարձավ Տիգրան Մեծի օրոք։ Դրամների մյուս կողմերին նշված պատկերներով, խորհրդանիշներով և արձանագրություններով հաղորդվում էին առաջնահերթ տեղեկություններ Հայաստանի վիճակի մասին, կապված թագավորի անվան հետ, որի պատկերը դիտվում էր դրամի վրա։ Այսպես, օրինակ, Տիգրան I հայոց թագավորի դրամների մի կողմերին միշտ որպես կանոն ներկայացված էր միապետի գլուխը հայկական թագով, իսկ մյուս կողմերին մերթ աստվածահայր Արամազդը իր պաշտամունքի խորհրդանշաններով, մերթ Հաղթանակի դիցուհին և երբեմն իրեն՝ ինքնակալի կերպարը ողջ հասակով։ Արձանագրությունները նվիրված էին նրա արքայական տիտղոսներին և հայտնի են երեք տարբերակներով։

Ա. ΒΑϹΙΛΕΩϹ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ

Արքայի Մեծի Տիգրանի

Բ. ΒΑϹΙΛΕΩϹ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟϹ

Արքայի Տիգրանի հելլենասերի

Գ. ΒΑϹΙΛΕΩϹ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟϹ

Արքայի Մեծի Տիգրանի հելլենասերի

Հիշյալ գրություններով հանդերձ Տիգրան I-ի դրամները միջազգային շրջանառություն չեն ունեցել։ Նրանք սպասարկել են տեղական շուկայի պահանջները Հայաստանի հարավ-արևմտյան գավառներում[15]։

Տիգրան Մեծի իշխանության տարիներին ընդլայնվում է հայկական դրամների շրջանառության ոլորտը։ Նրանք ընդունվում են ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին առևտրի միջազգային գործարքներում։ Ըստ էության Տիգրան Մեծի դրամներն իրենց վրա ունեցած պատկերներով ներկայացնում են արհեստի և արվեստի այն կատարելությունները, որոնք պահպանվել են հելլենիստական Հայաստանի դրամագործությունից։ Դրանք թողարկվում էին ինչպես մայր Հայաստանում, այնպես էլ Սիրիայում, Տիգրան Մեծի հզորության տարիներին, նրա լայնածավալ տիրակալության մեջ, միջազգային առևտրի պահանջով։ Հայաստանում նրա փողերանոցները գործում էին Տիգրանակերտում և Արտաշատում, իսկ Սիրիայում՝ վաճառաշահ Անտիոքում (Որոնտ գետի վրա) և ավելի հարավ՝ Դամասկոսում[16]։ Իրենց կշռային չափերով Տիգրան մեծի դրամները հարազատորեն պահպանում էին ատտիկյան սիստեմի սկզբունքները։ Տարածված էին առավելապես նրա արծաթյա դրախմանոցները (մեկ դրամյան) և տետրադրախմանոցները (չորեքդրամյան), իսկ ներքին մանր առուծախի համար՝ պղնձյա մեկ, կես և քառորդ միավորները։

---

[15] Henri Seyrig. Tresor Monetaire de Nisibe, Revue Numismatique, Paris, 1955, էջ 84—88, տախտ. I.

[16] Edward T. Newell, Late Seleucid Mints in Ake—Ptolemais and Damascus. Numismatic Notes and Monographs No. 84, the American Numismatic Society, Broadway, New York, 1939, էջ 95—107։

Տիգրան Մեծը դրամների վրա հաճախ պատկերված է ոչ լրիվ հասակով, դասական արվեստի ռեալիստական ոճով։ Յուրաքանչյուր մարդ, ով իր ձեռքին ունենար նրա դրամը, պետք է որ տեսներ հայոց արքայի պատկերը, երիտասարդ դիմագծերով, Արևմուտքի հելլենիստական միապետների նման առանց մորուքի, ածիլված երեսով, բայց գլխին այնպիսի թագով, որի նմանը չկար ժամանակակից և ոչ մի վեհապետի մոտ, ո՛չ Արևելքում և ո՛չ էլ Արևմուտքում[17]։ Այդ թագը վերևում ավարտված էր ճառագայթաձև ելուստներով, երբեմն սղոցի ատամների նման, իսկ ներքևից՝ երկար, մինչև ուսերը հասնող ականջակալներով ու վզկալով, ըստ որում ճակատային մասում թագի վրայից կապված էր արքայական ժապավենը և կենտրոնը զարդարված էր արևի պաշտամունքի խորհրդանիշներով՝ աստղ երկու արծիվների միջև։ Արքայի դիմանկարում հաճախ դիտվում են նաև նրա ծիրանու ծալքերը, ճարմանդված աջ ուսի մոտ։ Առնական խրոխտ հայացքով Տիգրան Մեծի խոշոր պատկերը (միշտ պրոֆիլ դեպի աջ) դրամի վրա վերցված էր բուսական նախշերից կամ ուլունքներից հյուսված շրջանակի մեջ։ Դրամի հակառակ կողմերին դրոշմում էին պաշտամունքային իմաստի խորհրդանշաններ, առավելապես երկրի մայր աստվածուհու կերպարը, բազմած ժայռաբեկորների վրա, ձեռքին արմավենու ճյուղ, բրգաձև թագը գլխին, իսկ ոտքերի տակ՝ ջրի աստվածության անձնավորումը լողացող մարդու մերկամարմին կերպարանքով։

Դեռևս Սելևկյանների վաղ ժամանակներից երկրի ապահովության համար կանգնեցվել էր նրա դիցուհու սրձանը մայրաքաղաքի՝ Անտիոքի մոտ, բարձրության վրա, Որոնտ գետի ափին։ Տիգրանի օրոք պետության անվտանգության այդ գաղափարը նույն արձանի ձևով դարձել էր գլխավոր խորհրդանշանը նրա դրամների վրա, այն տարբերությամբ, սակայն, որ ցորենի հասկի փոխարեն դրամի վրա դիցուհին ձեռքում ուներ արմավենու ճյուղ[18]։ Դամասկոսում կտրված դրամների վրա այդ նույն կերպարը պատկերված էր առատության եղջյուրով[19]։ Հայկական քաղաքներում այն դիտվում էր իբրև ողջ երկրի բախտի, բերքի, պաշտպանության ու փրկության մայր աստվածուհին՝ Անահիտը։ Բացի այդ կերպարից. Տիգրան Մեծի դրամների դրոշմը, հատկապես պղնձյա միավորների գծով, ներկայացնում էր հաղթանակի թևավոր դիցուհուն և կամ դյուցազուն Վահագնին[20], ինչպես նաև պաշտամունքային այլ նշաններ։ Իրենց վրա ունեցած արձանագրություններով Տիգրան Մեծի դրամները բաժանվում են երկու հիմնական խմբի.

I. *դրամներ, թողարկված* ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ, *այսինքն «Արքայի Տիգրանի» հունատառ խորագրերով։*

II. *դրամներ* ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ, *այսինքն «Արքայից արքայի Տիգրանի» տիտղոսաձևով։*

---

[17] Percy Gardner M. A., The Seleucid Kings of Syria, A Catalogue of the Greek Coins in the British Museum, Bologna, 1963, *էջ 103—105, տախտ.* XXVII.

[18] M. Ernest Babelon, Les Rois de Syrie, d'Armenie et de Commagene, Paris, 1890, *էջ* CCII—CCIII.

[19] Edward T. Newell. Late Seleucid mints in Ake—Ptolemais and Damascus, *տախտ.* XVII, No. 148—152.

[20] Percy Gardner M. A., The Seleucid Kings of Syria, p. 105, No. 18, *տախտ.* XXVII, No. 11; Alexander Von Petrowicz, Arsaciden Munzen, Wien, 1904, *էջ 191։*

Խորագրերի առաջին ձևն առավել բնորոշ է եղել սիրիական քաղաքներում թողարկված դրամների համար։ Ավագն Անտիոքում նման տետրադրախմաներ դրվագվել են մ. թ. ա. 83—78 թթ., իսկ Դամասկոսում՝ 72—69 թթ., ըստ որում դամասկոսյան դրամների վրա նշվում էին նաև նրանց թողարկման տարեթվերը, հաշված սելևկյան տոմարով[21]։ Բուն Հայաստանում Տիգրան Մեծի արծաթյա դրամները իրենց վրա կրում էին առավելապես «Արքայից արքա» տիտղոսաձևը[22]։ Այդպիսիները պահպանվել են մ. թ. ա. 77—73 թթ.։

Այս հիմնականից բացի, Տիգրան Մեծի օրոք հայկական դրամների պատկերատիպը լրացվում էր նաև փողերանոցներին և նրանց կառավարիչներին վերաբերող մենագրերով[23]։

Արտավազդ II (56—34) թագավորի իշխանության տարիներին դրամների թողարկումը կատարվում էր գերազանցապես Հայաստանում։ Հետևելով անցյալում ընդունված կանոններին, դրամների մի կողմի վրա դրոշմում էին Արտավազդի դիմաքանդակը, կիսանդրու չափով, հայկական թագը գլխին, երիտասարդ դեմքով, արքայական զարդարանքներով՝ ականջին օղ, պարանոցին մանյակներ, ուսին ծիրանի, իսկ հակառակ կողմին պատկերվում էր չորս ձիերով լծված մի մարտակառք, արշավի ընթացքով։ Մարտակառքը վարող կերպարանքը հավանաբար ինքը հայոց արքան էր, որին վերևից պսակ էր բերում հաղթանակի դիցուհին։ Այդ ողջ պատկերի շուրջ կային վերևից՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ներքևից՝ երկու տողով ΒΑΣΙΛΕΩΝ || ΑΡΤΑΥΑΖΔΟΥ հունատառ գրությունները, այսինքն հայոց թագավոր Արտավազդի (II) անվան հետ կապված այն տիտղոսաձևը՝ «Արքայից արքա», որն ընդունված էր Տիգրան Մեծի հզորության ժամանակներում։ Հայկական դրամների թողարկումը Արտավազդ II-ի օրոք նույնպես կատարվում էր ատտիկյան սիստեմով։ Պահպանվել են առավելապես դրախմանոցներ[24], իսկ տետրադրախմանոցները և պղնձյա միավորները հազվագյուտ են։ Հայաստանում գտնված մի բացառիկ տետրադրախմայի արձանագրությամբ Արտավազդը բացի իր «Արքայից արքա» հիմնական տիտղոսից մեծարված է նաև ΘΕΙΟΥ «Աստվածային» մակդիրով[25]։ Արտավազդ II-ի պղնձյա դրամների վրա ընդունված էր դրոշմել հաղթանակի թևավոր դիցուհու կերպարը[26]։ Նրա թագավորության վերջին տարիներին հռոմեական զորքի արշավանքները, Արտավազդի ձերբակալությունը և ի վերջո նահատակությունը[27] առժամանակ կասեցրին հայկական ազգային դրամների թողարկումը։ Որպես եզակի նմուշ այդ դժնդակ տարիներից հայտնի է Արտավազդի որդու՝ Արտաշես

---

[21] George Macdonald, Catalogue of Greek Coins in the Hunterian Collection University of Glasgow, Vol. III, Clasgow, 1905, էջ 1--5, տախտ. XLIII, No. 4; Edward T. Newell, Late Seleucid Mints in Ake—Ptolemais and Damascus, էջ 95, 107։

[22] Henri Seyrig, Trésor Monétaire de Nisibe, էջ 121։

[23] Edward T. Newell, Late Seleucid Mints, էջ 107։

[24] Warwick Wroth, Catalogue of the Greek Coins of Galatia, Cappadocia and Syria, Bologna, 1964, էջ 101, տախտ. XIV, No. 2.

[25] Ch. Muschegjan, Eine tetradrachme Artavazdes II, Bibliotheca classica Orientalis, 11 Jahrgang, Heft 4, Berlin, 1966, էջ 208—209։

[26] Հայաստանի պատմության պետական թանգարան, Գալաճյան ժողովածու, դրամ № 17620։

[27] Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1944, էջ 279։

Տիգրան II, արծաթյա չորեքգրամյան։



Արտաշիսյանների դրամներից. 7—Արտաշես II (?), 8—Տիգրան III, 9—Տիգրան IV։

II (30—20) Հայոց թագավորի պղնձյա դրամը, որի մի կողմին դրոշմած է տակավին երիտասարդ դիմագծերով հայոց արքա Արտաշես II-ի դիմաքանդակը՝ կիսանդրու չափով, գլխին պապենական թագը, ներկայացված ճիշտ այն ձևով, որ հայտնի էր իր հոր դրամներով։ Մյուս կողմին ցույց է տրված հաղթություն բերող դիցուհին՝ պսակը ձեռքին, սլացիկ վազքի մեջ, և հունատառ արձանագրությամբ Արտաշեսը հռչակված է «Մեծ արքա»։ Հիրավի, նա շուրջ տասը տարի գլխավորեց իր ժողովրդի պայքարը հռոմեական նվաճողների դեմ երկրի անկախության համար և հայերի համար նրա «Մեծ թագավոր» կոչվելու տիտղոսը միանգամայն օրինական էր։ Անշուշտ, այս եզակի պղնձյա դրամով[28] հնարավոր չէ պատկերացում ունենալ 30—20 թթ. հայկական դրամների մասին։ Ըստ էության այդ ժամանակամիջոցը մնում է բաց և միայն առաջիկա նոր դրամագյուտերը կարող են լրացնել մեր գիտելիքները։ Սակայն արդեն հաջորդ հայոց թագավորի՝ Տիգրան III-ի իշխանության տարիներից պահպանված հայկական դրամները հայտնի են որոշակի պատկերատիպերով։

Բացի արքայի դիմաքանդակից, Տիգրան III-ի դրամների վրայի (հակառակ կողմերին) հունատառ արձանագրությունները և պատկերները հայտնի են երկու հիմնական տեսակներով.

I. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΟΠΑΤΟΡΟΣ ΚΑΙ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ

այսինքն «Արքայի Մեծի Տիգրանի հայրենասերի արդարև հելլենասերի» տիտղոսով և իր՝ թագավորի կերպարը կանգնած դեպի ձախ, հագին երկար պատմուճան, գլխին հայոց թագը, աջ ձեռքը պարղած առաջ, իսկ ձախով բռնած երկար գավազան։ Արծաթի 3,83 դրամ քաշով։

II. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΘΕΟΥ

այսինքն՝ «Արքայի Մեծի Տիգրանի աստծու», ըստ որում արձանագրությունը փորագրված է հաղթանակի թևավոր դիցուհու շուրջը, որ պատկերված է դրամի կենտրոնում։

Այս երկրորդ տեսակից հայտնի են պղնձյա դրամական միավորներ, որոնց շարքում կան որոշ տարբերակներ։ Հաղթանակի դիցուհին մերթ փոխարինվում է փղի պատկերով, մի այլ տարբերակի վրա նույն արձանագրությունը լինում էր առյուծի գլխի և կամ թե միայնակ վազող մի ձիու շուրջ։ Բոլոր դեպքերում արձանագրությունը պահպանվում էր «Արքայի Մեծի Տիգրանի աստծու» ձևով։ Հիշյալ դրամների թողարկման հիմնական կենտրոնը հավանաբար Արտաշատն էր և նրանց շրջանառությունը հայկական շուկաներից դուրս չէր անցնում[29]։

Վերջին Արտաշիսյանների օրոք խիստ սահմանափակվում է Հայաստանում ազգային դրամների թողարկումը։ Արդեն Տիգրան IV արքայի պատկերով դրամները հայտնի են բացառապես պղնձյա միավորներով, մի իրողություն, որ վկայում է նրանց զուտ տեղական նշանակության մասին։ Ի տարբերություն իր կարմի բոլոր նախորդ արքաների, Արտաշիսյան Տիգրան IV հայոց թագավորը դրամների վրա պատկերված է միանգամայն ինքնատիպ, կրում է պատկառելի մորուք և ունի տարեց մարդուն բնորոշ դիմագծեր, որով մեծապես հեռացած է հելլենիստական արևմուտքի արքայական կերպարներից։ Զլիներ նրա

[28] Paul Z. Bedoukian, A Classification of the Coins of the Artaxiad dynasty of Armenia, էջ 63։

[29] Նույն տեղում, էջ 63—64։

գլխին Արտաշիսյան թագը, հավիվ թե կարելի լիներ տարբերել նրան պարթևական արքաներից։

Այս Տիգրան IV-ի դրամների վրա արձանագրությունները հայտնի են երեք հիմնական տարբերակներով.

I. ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ

Արքայի Տիգրանի

II. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ

Արքայի Մեծի Տիգրանի հելլենասերի

III. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ

Արքայի Մեծի Տիգրանի

Առաջին տիտղոսաձևը ներկայացված է բարի ճակատագրի կամ հաղթության դիցուհու հետ, երկրորդը կարդացվում է Աթենասի, իսկ երրորդը՝ Վահագնի կերպարների հետ։ Պատահում են դրամներ, որոնց վրա հիշյալ արձանագրություններից «Արքայի Մեծի Տիգրանի» ձևը դրոշմված է փղի պատկերի հետ[30]։

Տրգրան և Էրատո

Հայաստանի քաղաքական պատմության համար ուշագրավ են ծագումով զուտ Արտաշիսյան, այսպես կոչված Նոր Տիգրանի և նրա քրոջ՝ Էրատոյի դրամները։ Դրանք պղնձից են և հայտնի են հազվագյուտ նմուշներով[31], որոնց շնորհիվ մենք տեսնում ենք թագուհու դիմանկարը, մի բացառիկ երևույթ Արտաշիսյան տոհմից մեզ հասած պատկերների շարքում։ Էրատոն ներկայացված է հռոմեական տիրուհիներին բնորոշ ձևով, առանց թագի, գլխահետևում ամփոփված վարսերի գնդով։ Նրա պատկերի շուրջ նշված հունատառ արձանագրությունը հաղորդում է, որ նա Տիգրան թագավորի քույրն է (ΕΡΑΤΩ ΒΑCΙΛΕΩC ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΛΦΗ)։ Թագավոր տիտղոսը նշված է Տիգրանի դիմանկարի շուրջը, ըստ որում իր դիմագծերով այս Տիգրանը տարբեր է նախորդ մորուքավոր Տիգրանից։ Հայտնի է, որ Արևելքում մորուքավոր էին սովորաբար Պար-

30 Նույն տեղում, էջ 64—65, տախտ. XI, № 35։ Հայտնում ենք մեր երախտագիտությունը դրամագետ Գևոր Ֆ. Սարբաղին, որը 1966 թ. Հալեպից մեզ է ուղարկել Տիգրան IV-ին վերագրված, փղի պատկերով պղնձե դրամի լուսանկարը։

31 Государственный Эрмитаж, собрание античных монет, рукописный каталог № 19146.

թևաց թագավորները։ Էրատոյի եղբայր Տիգրանը առանց մորուքի է, ինչպես հատուկ էր Արևմուտքի միապետներին։ Նա միայն իր գլխին դրած հայկական թագով անմիջապես կարող էր ճանաչվել իբրև հայոց թագավոր։ Հռոմի կայսր Օկտավիանոսի օգնությամբ Հայաստանում արքա դարձած այս նոր Տիգրանը իր մեկ ուրիշ դրամի վրա հռչակված է պարզապես «Թագավոր Մեծ Նոր Տիգրան» (ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ)։

Հնարավոր է, որ այս Տիգրանը պետք է ներկայացներ Հռոմի նոր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, որի նպատակն էր մեղմացնել հայերի զայրույթը հռոմեացիների դեմ։ Թերևս պատահական չէր, որ հենց այս Տիգրանը կրում էր նաև «Արքայից արքա» (ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ)՝ Արտաշիսյանների հզորության ժամանակները հիշեցնող տիտղոսը։ Քաղաքական նշանակություն ունեցող այդ տիտղոսը առաջ էր քաշվել հավանաբար Հռոմի կողմից։ Հիրավի, Հռոմին բարեկամ Հայաստանը կարող էր դառնալ նրա հուսալի պաշտպանը Արևելքում իր դարավոր մրցակցի՝ Իրանի դեմ։



Տիգրան և Էրատո

Տակավին վերջերս պրոֆեսոր Զարեհ Պտուկյանի ջանքերով հայտնաբերվեց Հայաստանում թողարկված ևս մի նոր պղնձյա դրամ, որի վրա դրոշմված են մի կողմից Հռոմի կայսր Օկտավիանոսի դիմանկարը և նրա տիտղոսները հունատառ արձանագրությամբ (ΚΑΙΣΑΡ ΘΕΟΣ ΘΕΟΥ ΥΙΟΣ ΣΕΒΑΣΤΟΣ), իսկ մյուս կողմից՝ հայոց թագավոր Տիգրանի պատկերը, շուրջը գրված. ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ (Թագավոր Մեծ, Նոր Տիգրան)[32]։

Հետագայում Արտաշիսյանների անկումով դադարում է նրանց դրամների թողարկումը։ Հռոմի նվաճողական քաղաքականությունը Օգոստոս Օկտավիանոսի իշխանության տարիներին հիմնովին վերացրեց դրամների ազգային պատկերատիպը Հայաստանում։

Հայոց գահի վրա կայսերական Հռոմի դրածո՝ Արտավազդ IV թագավորի (4—6 թթ.) արծաթյա դրամները ինչպես իրենց կշռային սիստեմի տվյալներով, այնպես էլ պատկերներով միանգամայն հռոմեական են։ Նրանց մի կողմին պատկերվում էր Հռոմի կայսեր՝ Օգոստոս Օկտավիանոսի գլուխը, զարդարված դափնեպսակով (հին հռոմեական սովորության համաձայն հաղթողներին դափ-

32 Զարեհ Պտուկյան, Արտաշեսյան հարստության դրամները, Վիեննա, 1969, էջ 60—61; Труды Московского Нумизматического общества, т. III, вып. I, М., 1905, էջ 155։

նիներով էին պսակում)։ Կայսեր այդ դիմաքանդակի շուրջը արձանագրված է. ΘΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ, այսինքն «Աստծո կայսեր բարերարի», իսկ դրա հակառակ կողմին ներկայացվում էր Արտավազդի դիմանկարը, ըստ որում առանց Արտաշիսյանների հայկական թագի, միայն վարսակալ ժապավենով, որ բնորոշ էր ժամանակի հռոմեական իշխողներին։ Հայոց այդ թագավորի պատկերի շուրջ նշվում էր ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ, այսինքն «արքայի Մեծի Արտավազդի» խոսքերը։ Արծաթյա այս դրամի պատկերատիպը ինքնըստինքյան արտացոլում է այն կախյալ քաղաքական վիճակը, որի մեջ գտնվում էր Հայաստանը Արտավազդ IV-ի օրոք[33]։ Մեկ տարի անց, երբ Հայաստանում թագավորական գահին բարձրացավ Հրեաստանի Հերովդես Մեծի թոռը՝ Տիգրան V անունով (մ. թ. 6 թ.), թողարկվեցին պղնձյա դրամներ, որոնց վրա այս Տիգրանը պատկերված է գլխին հինավուրց հայկական թագով, այնձևի, որը հայտնի էր Տիգրան Մեծի և նրա անմիջական հաջորդների դրամներով։

Արևմուտքի հելլենիստական արքաներին բնորոշ դիմագծերով այս միապետը իր գլխին հայկական ազգային թագը կրելով հավանաբար կամեցել է պահպանել Արտաշիսյանների տրադիցիաները այնպիսի մի ժամանակ, երբ դրանք անկում էին ապրում։ Դրամի հակառակ կողմի պատկերատիպը ներկայացնում է երկու ձիերով լծված մարտակառք, որով թագավորը արշավում է։ Ի նշան հաղթության նա մի ձեռքով դափնեճյուղ (?) է բռնել։ Այս տեսարանի վերևից երկու տողով գրված է ΒΑΣΙΛΕΩΣ || ΜΕΓΑΛΟΥ, իսկ ներքևում՝ ΤΙΓΡΑΝΟΥ։ Դրամը պահվում է Փարիզի ազգային մատենադարանում[34], կշիռը՝ 6,44 գրամ պղինձ, տրամագիծը՝ 18 միլիմետր։

Արտաշիսյաններից հետո հայ ազգային դրամների թողարկումը դարերով կանգ առավ։ Հայաստանի քաղաքական վիճակի մասին պատմում են հետագա շրջանի կայսերական Հռոմի դրամները, նվիրված առանձին հռոմեական զորավարների դեպի Հայաստան կատարած արշավանքներին և հայ-հռոմեական կարևոր իրադարձություններին։

Սակայն այդ չկասեցրեց դրամական շրջանառության հետագա զարգացումը Հայաստանում, քանի որ վերջին Արտաշիսյանների դրամները երկրի դրամական տնտեսության մեջ տիրապետող չէին։

Նրանք դիտվում էին, ինչպես ասվեց, գլխավորապես ներքին շուկայում։ Միջազգային ապրանքափոխանակության գործարքները կատարվում էին հիմնականում պարթևական, անցյալից մնացած սելևկյան ու Տիգրան Մեծի, ինչպես նաև Հռոմի հանրապետական և արդեն մ. թ. ա. I դարի 20-ական թթ.՝ հռոմեական կայսրության արծաթե դրամներով, որոնք թափանցել էին Հայաստանի և հարևան երկրների դրամական շրջանառության մեջ։ Ըստ էության Արտաշիսյան Տիգրան IV (մ. թ. ա. 2—մ. թ. ա. 1 թ.) և Արտավազդ IV (4—6 թթ.)

---

[33] Percy Gardner, On an unpublished Coins of Artavasdes II, King of Armenia, the Numismatic Chronicle and Journal of the Numismatic Society, New Series, Vol. XII, London, 1872, էջ 13, տախտ. I, No. 7; Warwic Wroth, Catalogue of the Greek Coins of Galatia, Cappadocia and Syria, Bologna, 1964, տախտ. XIV, No. 3.

[34] Մինչև վերջերս բացառիկ այս դրամը համարվել էր անորոշ, տե՛ս Georges le Rider, Monnaies Grecques Acquises par le Cabinet des Medailles en 1959, Revue Numismatique, Paris, 1960, էջ 29—30։ Սակայն պատկերատիպը և արձանագրության իմաստը թույլ է տվել դասելու այն արտաշիսյան դրամների շարքը, համարելով թողարկված Տիգրան V հայոց արքայի օրոք, տե՛ս Paul Z. Bedoukian, նշվ. աշխ., էջ 6։

թագավորների դրամները որոշ պատկերատիպերով ավելի շուտ հայ-հռոմեական դրամներ էին։ Դրանց վրա մի կողմից դրոշմված էր հայոց թագավորի, իսկ մյուս կողմից՝ Հռոմի կայսր Օգոստոս Օկտավիանոսի դիմաքանդակը։ Այդ մասին է վկայում ոչ միայն Արտավազդ IV-ի վերևում հիշատակված արծաթե դրամը, այլև վերջերս հայտնաբերված Տիգրան IV-ի պղնձյա դրամը[35]։ Բացի դրանից, հարկ է գիտենալ, որ չնայած արտաշիսյան դրամների հետագա թողարկումը դադարել էր, բայց նրանց շրջանառությունը չէր վերացել, ճիշտ այնպես, ինչպես չէր վերացել հելլենիստական պատկերատիպի այլ դրամների շրջանառությունը Հայաստանի ներքին ու արտաքին առևտրի մեջ։ Այլ կերպ ասած, Հայաստանում արտաշիսյան դրամների շրջանառությունը շատ ավելի երկար է տևել, քան Արտաշիսյան տոհմի թագավորությունը երկրի քաղաքական կյանքում։

Տիգրան և Օգոստոս

Արտավազդ և Օգոստոս

Այդ իրողությունը պատահականություն չէր։ Միշտ, որպես կանոն, շրջանառության մեջ նոր թողարկման դրամների հետ շարունակվում էին ընդունվել հին թողարկման դրամները։ Նորերը նախապես հանդես էին գալիս աննշան քանակությամբ և անցյալից մնացած դրամային միավորների հոծ զանգվածում հա-

35 Զարեհ Պտուկյան, նշվ. աշխ., էջ 60—61։

ճախ լինում էին աննկատ, բայց իրենց թարմ հոսանքով աստիճանաբար դառնում էին նշանակալից։

Արտաշիսյանների անկման տարիներին Հայաստանի դրամական շրջանառությունը արդեն թևակոխել էր իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում էր Հռոմի կայսերական դրամների տարածմամբ։ Անցյալից մնացած հելլենիստական, այդ թվում նաև արտաշիսյան, ինչպես նաև Հռոմի հանրապետական դրամները սպառվում էին։ Մինչդեռ կայսերական դրամների թարմ հոսանքով արագորեն լիցքավորվում էին առևտրի հայկական շուկաները։

Հռոմեական դրամային սիստեմը լայն ճանաչում էր գտել միջազգային առևտրում, հետ մղելով նախկինում ընդունված ատտիկյան սիստեմը, չնայած վերջինս պահպանվեց Իրանում, ինչպես և Հռոմին ենթակա Կապադովկիայում, մասամբ փոքրասիական ու սիրիական վաճառաշահ քաղաքներում։ Հռոմեական դրամահաշվային սիստեմով եվրոպական ու ասիական երկրներում թողարկում էին ոսկյա, արծաթյա ու պղնձյա դրամներ, ըստ որում, ի տարբերություն հանրապետական ժամանակների, կայսրությունը ոսկյա դրամներ դրվագում էր առավել կանոնավոր։ Ոսկու գծով հիմնական միավորը կոչվում էր աուրեուս (AUREUS NUMMUS), օրինական քաշով 8,19 գրամ ոսկի։ Մեկ հռոմեական ֆունտ ոսկուց (327,45 գրամ) հատում էին 40 աուրեուսներ։ Դրամագյուտերը ցույց են տալիս, որ Հայաստանում Հռոմի կայսերական ոսկյա դրամները հազվագյուտ են։ Բայց հիմնական դրամային միավորը հռոմեական արծաթ դրամն էր, որը կոչվում էր դենար (DENARIUS), այսինքն «տասանոց»՝ սերված լատիներեն deni=«տասնյակ» բառից։ Վաղ կայսերական շրջանի հռոմեական դենարը իր կշռային չափով կազմում էր ֆունտի $\frac{1}{84}$ մասը, ներկայացնելով 3,90 գրամ արծաթ։ Ոսկու և արծաթի փոխանակությունը դիտվում էր 1:11,9 հարաբերությամբ։ Ներքին շուկայի մանր առևտրի համար թողարկում էին պղնձի և աբույրի խառնուրդով դրամներ, որոնց միավորի քաշը սահմանված էր մեկ ունցիա (UNCIA), այսինքն 27,30 գրամ։ Այդ խոշոր պղնձյա դրամը կոչվում է սեստերցիա, իսկ նրա կեսը (13,65 գրամը) անվանվում էր դոպոնդիուս (DUPONDIUS)։ Արծաթի ու պղնձի փոխանակությունը որոշ տատանումներով նշվում էր 1:45 հարաբերությամբ։

Հռոմի կայսերական դրամների հաշվային համակարգը, միավորների ստորաբաժանումներով, կարելի է պատկերացնել հաջորդ էջի աղյուսակով[36]։

Հարկ է նշել, որ դեռևս հանրապետության անկման տարիներից առանձին հռոմեական զորավարներ սովորություն էին դարձրել իրենց արշավանքների ու հաղթանակների փառքը հավերժացնելու համար ոսկյա, արծաթյա ու պղնձյա շքադրամներ թողարկել։ Շրջանառության մեջ անցնելով քաղաքից-քաղաք, բյուրավոր մարդկային ձեռքերի միջով, հռոմեական այդ շքադրամները իրենց վրա ունեցած պատկերներով ու գրություններով հաղորդում էին տեղեկություններ այն երկրների մասին, որոնք այս կամ այն առիթով դարձել էին Հռոմի ագրեսիվ քաղաքականության զոհը։ Նմանօրինակ շքադրամներ թողարկվել են Գալլիայի, Գերմանիայի, Դակիայի, Իսպանիայի, Սիցիլիայի, Հունաստանի և

[36] Harold Mattingly M. A., Coins of the Roman empire in the British museum, vol. I, London, 1923, էջ II; David R. Sear, Roman coins and their values, London, 1964, էջ 9.

Միավորը	Հարաբերակցությունը							
	ոսկի քսան դրամանոց	արծաթի դենարիուս	արծաթի քվինարիուս	արծաթի սեստերցիուս	արծաթի դուպոնդիուս	պղնձի Աս	պղնձի դուպոնդիուս	պղնձի սեստերցիուս
Աուրեուս	2	25	50	100	200	400	800	1600
Քվինարիուս ոսկի .	1	$12^1/_2$	25	50	100	200	400	800
Դենարիուս արծաթ .	—	1	2	4	8	16	32	64
Քվինարիուս	—	—	1	2	4	8	16	32
Սեստերցիուս	—	—	—	1	2	4	8	16
Դուպոնդիուս	—	—	—	—	1	2	4	8
Աս	—	—	—	—	—	1	2	4
Սեմիս	—	—	—	—	—	—	1	2
Քվադրանս	—	—	—	—	—	—	—	1

այլ երկրների հռոմեական նվաճումների առիթներով։ Հայաստանի համար առաջին հռոմեական շքադրամները թողարկվել են Մարկոս Անտոնիոսի կողմից։ Դրանք դենարներ էին, դրվագված մ. թ. ա. 35—34 թթ. Փոքր Ասիայում և հավանաբար Հայաստանի մայրաքաղաք Արտաշատում։

Հիշյալ շքադրամների պատկերներով պարզորոշ հասկացվում էր, որ Հայաստանում ազգային իշխանությունը տապալված էր։ Եվ եթե մի դեպքում ցույց էր տրված, որ հայոց միապետության թագը նետահարված ու բռնագրավված է, ապա մյուս դեպքում առաջին անգամ հռոմեական ծագում ունեցող դրամների վրա նշվում էին ARMENIA DEVICTA «Հայաստանը հաղթված» խոսքերը։ Ժամանակագրական առումով մ. թ. ա. 35—31 թթ. այդ դրամները հիշատակում էին Հայաստանի դեմ տարած հռոմեական հաղթությունները, ըստ որում կապված Մարկոս Անտոնիոսի անվան հետ[37]։

Կայսրության հաստատման տարիներին այդ դրամները շրջանառությունից դուրս չէին եկել։ Հռոմի վաղեմի ձգտումն էր վերացնել հայոց անկախ թագավորությունը, մի նպատակ, որ կարևոր էր Իրանի դեմ մղվող պայքարի հաջողության գործում։ Օգոստոս Օկտավիանոսը շարունակեց այդ քաղաքականությունը և հետևելով Անտոնիոսին, ինքը ևս արդեն մ. թ. ա. 20—18 թթ. թողարկեց շքադրամներ՝ նվիրված Հայաստանին։ Օկտավիանոսյան այդ շքադրամներից պահպանվել են ոսկյա ու արծաթյա նմուշներ, ըստ որում տարբեր պատկերներով և արձանագրություններով։ Դրանցից մեկի վրա (ոսկի, 7,84 գրամ, տրամագիծը 20 միլիմետր) հստակորեն դիտվում է Օգոստոս Օկտավիանոսի դիմաքանդակը, տակը գրված AVGVSTVS, մյուս կողմին պատկերված է հաղթանակի թևավոր դիցուհին, որը գետին է տապալում ցուլին։ Այդ տեսարանի վերևում դրված է. ARMENIA, ներքևում՝ CAPTA, այսինքն «Հայաստանը նվաճված»։ Պատկերված ցուլը, որին Հռոմի հաղթությունը գետին է տապալում, Հայաստանն էր։ Ոսկյա այդ դրամը թողարկվել էր Արևելքում և բացառված չէ՝ թերևս հայկական քաղաքներում այդ տարիներին գործող փողերանոցներից մեկում։

Հռոմում մ. թ. ա. 18 թ. թողարկվեցին նաև արծաթյա շքադրամներ, որոնց վրա պատկերված էր մարդկային մի կերպարանք, հայոց թագը գլխին, ծնկա-

[37] Edward A. Sidenham M. A., The coinage of The roman republic, London, 1952, էջ 194, №№ 1205, 1210, տախտ. 29։

շոք դիրքով, ձեռքերը պարզած աղատություն աղերսելու տնսքով և շուրջը գրված. CAESAR. DIVI. F. ARME. CAPT. (Կեսար, աստծո որդի, Հայաստանը նվաճված), այդ նույն դենարի հակառակ կողմի վրա Հռոմը ներկայացված էր աղատության դիցուհու կերպարով։

Նմանօրինակ արծաթյա շքադրամներից պահպանվել են տարբերակներ, որոնց վրա աղատության դիցուհու կերպարը փոխարինված էր արիության աստվածուհու՝ Վիրտուսի պատկերով, իսկ Հայաստանը ներկայացված իբրև ռազմիկ, գլխին թաց կամ սաղավարտ, ձեռքերը հնազանդ իրանին մոտ պահած և կամ թե իր զենքերով հանդերձ (նիզակ, աղեղ) թևերը ամուր մարմնին կապված։ Օգոստոս Օկտավիանոսի մ. թ. ա. 20—18 թթ. թողարկված արծաթե շքադրամներից հայտնի են նաև այնպիսիները, որոնց վրա պատկերված են հայոց թագը, գերված զենքերը (նետ ու աղեղ) և վերևից ու ներքևից արձանագրված՝ ARMENIA CAPTA (Հայաստանը նվաճված) կամ ARMENIA RECEPTA (Հայաստանը վերստին նվաճված) խոսքերը։

Պատկերների տարբերությունները շատ էին, բայց նպատակը մնում էր նույնը՝ տարածել հռոմեական զենքի փառքը և դրանով իսկ հնազանդության մեջ պահել նվաճված երկրների ժողովուրդներին։ Սակայն Օգոստոս Օկտավիանոսի շքադրամները մասսայական թողարկում չեն ունեցել, հետևաբար Հայաստանում և ընդհանրապես միջազգային շրջանառության մեջ լայն տարածում չէին կարող ունենալ։

Հայաստանի համար կայսերական դրամների թարմ հոսանքը, նրանց առավելությունը դիտվում է Օկտավիանոսի այն դենարներով, որոնք թողարկվել էին իր՝ Օգոստոս Օկտավիանոսի և նրա երկու որդիների՝ Գայուսի ու Լուցիուսի պատկերներով։

Դրանք ի հայտ են եկել Էրեբունի և Գառնի ամրոցներում, Արտաշատի և Դվինի ավերակներում, Արթիկում, Կոշում, Իջևանում, Էջմիածնի շրջակայքում և այլուր։ Հայկական ՍՍՀ տարածության վրա պարզապես հազիվ թե լինի մի շրջան, ուր Լուցիուսի և Գայուսի կերպարանքների դրոշմով օկտավիանոսյան արծաթե դրամներ գտնված չլինեն։ Նույնը դիտվում է Վրաստանի և Աղվանքի վերաբերյալ։ Ավելին, այդ դենարները լայն տարածում են ունեցել նաև կենտրոնական Եվրոպայում, Մերձավոր Արևելքում ու Հնդկաստանում։ Ուսումնասիրությունները պարզել են, որ Հռոմի վաղ կայսերական շրջանի արծաթյա այդ դրամները թողարկվել են գլխավորապես արտաքին առևտրի պահանջով։ Իրենց պատկերատիպի մանրամասնություններով Հայաստանում գտնված օկտավիանոսյան հիշյալ արծաթյա դրամները հար և նման են Գալլիական թողարկման դենարներին, որոնք վերագրվում են մ. թ. ա. 2—մ. թ. 11 թթ.։ Սակայն Անդրկովկասում դրանց առկայության մասսայական բնույթը հիմք է տալիս ենթադրելու, որ այդպիսիները կարող էին թողարկվել նաև Մերձավոր Արևելքի քաղաքներում, թերևս հատկապես Հայաստանում, ըստ որում ոչ միայն Օգոստոս Օկտավիանոսի, այլև նրա հաջորդների օրոք։ Հայկական շուկաները դրանք թափանցել են միջազգային առևտրի այն ուղիներով, որոնցով շրջանառության մեջ էին մտնում անցյալում հելլենիստական և Հռոմի հանրապետական դրամները։ Սիրիայից ու Միջագետքից Եփրատի ու Տիգրիսի վրայով ապրանքափոխանակությունը բերում էր նրանց Արաքսի հովիտը և այնուհետև Քուրի ավազանով տանում դեպի Վրաստան ու Աղվանք։ Արծաթի բարձր պարունակությամբ այդ դրամները միջազգային շուկայում

Հռոմեական շքադրամներ, թողարկված Հայաստանի նվաճման առթիվ, մ. թ. ա. 20—18 թթ.։



1

2

3

Հռոմեական շքադրամներ, մ. թ. I—II դդ.։

համընդհանուր վստահություն էին շահել և ճանաչվում էին իբրև ամենակայուն քաշի դրամական միավորները։ Պատահական չէ, որ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Արևելքում, հանդես եկան դրանց ընդօրինակությամբ տեղական կերտվածքի արծաթյա դրամներ։

Հռոմեական արծաթյա դրամ, Օդոստոս Օկտավիանոսի և նրա որդեգիրների պատկերներով։

Հայաստանում վաղ կայսերական այդ դրամների տարածման հետ, որ սկսվել էր դեռևս մինչ Արշակունիների թագավորության հաստատումը, խիստ հազվադեպ, հատ ու կենտ նմուշներով, դիտվում է նաև պարթևական դրամների թափանցումը։ Դրանցից նախ և առաջ ներկայանում են Վոնոն I (8—16 թթ.) պարթև արքայի իշխանության տարիներին թողարկված ատտիկյան կշռային չափերի արծաթյա և պղնձյա դրամային միավորները։ Դրանք իրենց պատկերատիպերով որոշակիորեն տարբերվում են մինչ այդ, Արտաշիսյանների օրոք Հայաստանում շրջանառության մեջ եղած պարթևական դրամներից։ Տարբերությունը նկատվում է Վոնոն I-ի արծաթյա դրախմաների ու տետրադրախմաների վրա, արքայական գիմանկարի շուրջ նշված հունատառ գրություններով։ Դա նորություն էր, որ կատարվել էր պարթևական դրամների ձևավորման մեջ։ Մինչ այդ պարթև արքաների անձնանունները դրամների վրա չէին արձանագրվում։ Արքայական անձնանունների հիշատակումը բնորոշ էր Արևմուտքի հելլենիստական միապետներին և այնուհետև հատուկ դարձավ Հռոմի կայսրերին, երբ վերջիններիս դրամների վրա որպես կանոն նրանց գիմանկարների շուրջ նշվում էին տիտղոսները և անձնանունը։

Վոնոն I-ի դրամները պատկանում են պարթևական ծագում ունեցող այն հազվագյուտ դրամների շարքին, որոնց վրա արքայի պատկերի շուրջ նշված են նրա տիտղոսները և անձնանունը։ Շեղվելով պարթևական ավանդույթից, Վոնոն I-ի դրախմաներն ու տետրադրախմաները Հայաստանում Օկտավիանոսի դենարների տարածման ժամանակ շրջանառության մեջ անմիջապես ճանաչելի էին դառնում։ Այդ ինքնատիպությունը պատահականություն չէր, այլ արտահայտություններից մեկն այն զորեղ ազդեցության, որ թողել էր դրամների ձևավորման հռոմեական ոճը պարթևական և ընդհանրապես արևելյան դրամների վրա։ Հռոմեական դաստիարակություն ստացած, Հռոմից նախ Իրանում (8—12 թթ.) և այնուհետև Հայաստանում (12—16 թթ.) Օգոս-

տոս Օկտավիանոսի կողմից թագավոր կարգված Վոնոնի դրամները կապված են երկրի այդ շրջանի քաղաքական պատմության հետ։ Պահպանված արծաթյա չորեքդրամյանների վրա բարձրաքանդակ տեսքով դրոշմված է Վոնոնի կիսանդրին, գլուխը զարդարված արքայական ժապավենով, դեմքը մորուքավոր, վարսերը խոշոր փնջերով իջած են ուսին, իսկ շուրջը գրված է. ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΟΝΩΝΗΣ, այսինքն՝ Արքայից արքա Վոնոն։ Մյուս կողմում պատկերված է հաղթանակի դիցուհին՝ կանգնած, ձեռքին պսակ, ուսին դափնեճյուղ և նրա շուրջ հունատառ արձանագրված է. ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΕΥΕΡΓΕΤΟΥ ΔΙΚΑΙΟΥ ΕΠΙΦΑΝΟΥΣ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ (Արքայից արքա Արշակի բարեգործի արդարադատի նշանավորի հելլենասերի) և այդ բոլորի հետ նաև դրամի թողարկման տարեթիվը՝ սելևկյան տոմարով հաշված։ Ուշագրավ է, որ դրախմանոցների վրա արքայի դիմանկարի շուրջ նշվում է միայն ΒΑCΙΛ ЄΥC ΟΝΩΝΗC = թագավոր Վոնոն, իսկ հակակ կողմում պատկերված հաղթանակի կերպարի մոտ՝ ΒΑCΙΛ ЄΥC ΟΝΩΝΗC ΝΕΙΚΗCΑC ΑΡΤΑΒΑΝΟΝ, այսինքն՝ թագավոր Վոնոն հաղթող Արտաբանի։ Հիշյալ տիտղոսաձևը ևս արտասովոր էր պարթևական պատվանունների շարքում և արտացոլում է այդ ժամանակներում Վոնոնի և նրա ախոյան Արտաբան III-ի միջև եղած պայքարը, որ հիշատակվում է պատմիչների կողմից։

Բրբև քաղաքական լոզունգ, դա ևս ըստ էության հռոմեական ձևի արտահայտություններից մեկն էր պարթև Վոնոն I-ի դրամների վրա։ Հայտնի էր, որ հռոմեական զորավարները և կայսրերը իրենց ռազմի հաղթությունների փառքը հավերժացնելու համար հաճախ կոչվում էին իրենց իսկ կողմից պարտված թշնամիների անուններով։ Այսպես, օրինակ, Օկտավիանոսի եղբոր թոռը գերմանացիների դեմ տարած հաղթանակների համար կոչվում էր Գերմանիկոս (GERMANICVS)։ Դա նրա պատվանունն էր։ Վոնոնը ժամանակակից էր Գերմանիկոսին և լինելով Օկտավիանոսի դրածոն պարթևաց գահի վրա, հռոմեական ձևով է հիշատակել յուր տիտղոսը՝ ΝΕΙΚΗCΑC ΑΡΤΑΒΑΝΟΝ (հաղթող Արտաբանի) Արտաբան III -ի (12—38 թթ.) դեմ տարած հաղթանակների համար։

Սակայն ուշագրավ է այն իրողությունը, որ Վոնոնի դրամները թողարկվել են ոչ միայն Իրանում, այլ հավանաբար նաև Հայաստանում, ինչպես այդ մասին կարելի է դատել նրանց վրա նշված մենագրերից։ Պահպանված մենագրերի շարքում կան այնպիսիները, որոնք իրենց ձևով պարզորոշ արտահայտում են Տիգրանակերտ քաղաքի անվան հունատառ ΤΓΡ հնչյունների գրաֆիկ միահյուսվածությունը։ Հիրավի Վոնոնը կարճ ժամանակով (12—16 թթ.) եղել է հայոց թագավորը, պաշտոնապես հաստատված Հռոմի կողմից։ Տիգրանակերտը առևտրի կարևոր կենտրոն էր Միջագետքից դեպի Փոքր Ասիա և Մեծ Հայքի հյուսիսային կողմերը ու այնուհետև Կովկաս տանող ճանապարհների վրա։

Հայկական պետության համար Տիգրանակերտը եղել է նաև դրամներ թողարկելու կենտրոն Արտաշիայանների թագավորության տարիներին։ Հռոմեական տիրապետության սկզբին նա հավանաբար դեռ չէր սպառել իր այդ նշանակությունը։ Սակայն Վոնոնի դրամներից շատ քիչ են պահպանվել, մի իրողություն, որը արտահայտում է շրջանառության մեջ նրանց ոչ մասսայական լինելը։ Վոնոնի դրամների թողարկումից երկու տարի անց, մ. թ. 18 թ.,

կայսրությունը Հայաստանում թագավոր կարգեց Պոնտոսի արքայազն Զենոնին։ Թագադրության հանդիսավոր արարողությունը կատարվեց Արտաշատում, Տիբերիոս կայսեր որդեգիր զորավար Գերմանիկոսի ձեռքով։ Զենոնը կոչվեց հայերի համար նվիրական Արտաշես անունով։ Այդ առիթով կայսրությունը արծաթյա շքադրամներ թողարկեց, որոնք իրենց վրա ունեցած պատկերների և լատիներեն արձանագրությունների դրոշմով միանգամայն հռոմեական էին, չնայած կշռային տվյալներով մնում էին իբրև ատտիկյան դիդրախմանոցներ (երկդրամյաններ)։ Դրանցից յուրաքանչյուրի վրա՝ մեկ կողմից պատկերված էր Գերմանիկոսի գլուխը և շուրջը գրված. GERMANICVS CAESAR. TI. AVG. F. COS. II (Գերմանիկոս. կեսար, Տիբերիոս, Ավգուստի որդի, երկրորդ անգամ հյուպատոս)։ Մյուս կողմից պատկերներով ներկայացված էին հայոց թագավոր Արտաշեսը և հռոմեական կոնսուլ Գերմանիկոսը, կանգնած կողք-կողքի։ Գերմանիկոսը ձախ ձեռքով հենվել է իր նիզակին, իսկ աջով ցույց է տալիս հայոց արքային, որը պատիվ է բռնել գլխին դրված թագի համար։ Երկուսն էլ պատկերված են հռոմեական ռազմի տարազով, կարճ անդրավարտիկներով, ազդրերից մինչև ոտքերը մերկամարմին տեսքով։ Նրանցից յուրաքանչյուրի կողքին լատինատառ արձանագրված է ձախից՝ ARTAXIAS (Արտաշես), աջից՝ GERMANICVS (Գերմանիկոս) և այդ ամենը վերցված կետավոր շրջանակի մեջ։

Արշակունի Վոնոն, մ. թ. 8—16 թթ.։

Հռոմեական կայսրության կողմից հայերին թագավոր տալու առիթով այս շքադրամի թողարկումը ուներ քաղաքական նշանակություն։ Դրանցով հաղորդվում էր այն իրավիճակի մասին, որ ստեղծվել էր 18 թ. Արևելքում և մասնավորապես Հայաստանում՝ ի նպաստ Հռոմի։

Շրջանառության մեջ այդ շքադրամները լայն տարածում չեն ունեցել և շատ ավելի քիչ օրինակներով են պահպանվել, քան հայ-հռոմեական հարաբերություններին նվիրված մեզ հայտնի մյուս դրամները։ Այդուհանդերձ պատմականորեն կարևոր է այն իրողությունը, որ շուրջ 16 տարի այդ պոնտացի Արտաշես կոչված թագավորի (18—34 թթ.) օրոք Հայաստանի դրամային շրջանառությունը շարունակում էր զարգանալ հռոմեական կայսրության դրամներով։ Հայաստանը դարձել էր սահմանակից կայսրության տերիտորիա Արևելքում և ապրանքափոխանակությունը կատարվում էր առանց միջնորդ ան-

ցումների։ Երկրի ներքին առևտրի մեջ, մասնավորապես մանր առուծախի տեղական գործարքների համար ընդունվում էին պարթևական պղնձյա դրամներ, թողարկված Վարդան I (41—45 թթ.), Գոտարզ II (41—51 թթ.) և արդեն հետագայում նաև Վաղարշ I (51—75 թթ.) թագավորների պատկերներով և նրանց տիտղոսների հունատառ արձանագրություններով։ Դրանք իրենց կշռային չափերով ատտիկյան սիստեմի օբոլոսներ ու դիոբոլոսներ էին, որոնց վրա արքայական դիմանկարներից բացի դրոշմված էին դիցաբանական իմաստի խորհրդանշաններ (արծիվ, ձի, հաղթանակ և այլն)։ I դարի պարթևական պղնձյա դրամները, ինչպես և արծաթյա դրախմաները Հայաստանում գտնված դրամագիտական նյութի մեջ քանակապես շատ աննշան են, սակայն դրանք պատահականություններ չեն, այլ նախարշակունյաց շրջանում զարգացող հայ-պարթևական հարաբերություններից պահպանված հիշատակներ։ Հայտնի է, որ Վարդան I պարթև արքան 40—41 թթ. փորձեց նվաճել Հայաստանը Հռոմեական կայսրությունից։ 54 թ. Վաղարշի զորքերը գրավել էին Տիգրանակերտն ու Արտաշատը։ Հնարավոր է, որ հենց այդ ժամանակներում պարթևական արծաթյա ու պղնձյա դրամները շրջանառության մեջ են եղել հայկական քաղաքներում, ուր նրանք կարող էին բերվել ոչ միայն պարթևական զորքերի հետ, այլև տեղում թողարկվել պարթևների հաստատման թեկուզ շատ կարճատև միջոցին։ Սակայն Հռոմի կայսերական դրամների առավելությունը տարեցտարի իր անընդմեջ հոսանքով այնքան էր բացահայտ, որ պարթևական նոր թողարկված դրամների լիցքը չէր փոխում ստեղծված վիճակը։ Արդեն 58—59 թթ. Արտաշատը և Տիգրանակերտը, որոնք ապրանքային շրջանառության և դրամների թողարկման կարևոր կենտրոններ էին, կրկին անցել էին հռոմեացիների ձեռքը։ 59 թ. Ներոն կայսեր անունից թողարկվեցին շքադրամներ Հայաստանի նվաճման առթիվ։ Դրանք արծաթի երկդրամյաններ (դիդրախմաներ) և կեսդրամյաններ (հեմիդրախմաներ) էին, որոնց վրա դրոշմված էին մի կողմից Ներոնի դիմանկարը, գանգրահեր և պսակազարդ գլխով, շուրջը արձանագրված NERO CLAVD. DIVI. CLAVD F. GAESAR AVG. GERMANI (Ներոն Կլավդիոս, որդի աստվածային Կլավդիոսի, կեսար, Ավգուստոս, գերմանացիներին հաղթող), մյուս կողմից հաղթանակի թևավոր դիցուհին, որը վերևից իջնում է ներքև, ձեռքին՝ դափնեպսակ ու արմավենու ճյուղ, իսկ կենտրոնում՝ արձանագրված ARMENIAC, այսինքն «Հայաստանին հաղթող»։

Մեզ հայտնի արծաթյա այս ներոնյան շքադրամների քաշը պահպանվել է մոտ 7,5 գրամ՝ երկդրամյանների, իսկ 1,5—2,0 դրամ՝ կեսդրամյանների համար։ Այդպիսիները դրվագվում էին Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայում, որը Հռոմի կայսրության կողմից ատտիկյան սիստեմով դրամների թողարկման կարևոր կենտրոններից մեկն էր Փոքր Ասիայում[38]։

Հարկ է նկատել, որ արծաթի պարունակությունը կայսերական դրամների մեջ այդ ժամանակներում խիստ սակավ էր դարձել։ 64 թ. հատուկ ռեֆորմով Ներոնը հռոմեական դենարի քաշը նվազեցրել էր, սահմանելով այն ֆունտի $\frac{1}{96}$ մասը—3,40 գրամ, ըստ որում դրանց մեջ արծաթը 55—65% էր կազմում։

[38] Harold Mattingly M. A., Coins of the Roman empire in the British museum, vol. I, London, 1923, էջ 281, №№ 406—412.

Ներոն, արծաթյա դրամ, մ. թ. 59 թ.։

Ներոնի ռեֆորմով սահմանված Հռոմի կայսերական դրամների թափանցումը Հայաստան կատարվում էր արդեն այն պահին, երբ երկրում հաստատվել էր Արշակունիների թագավորությունը, որին վիճակված էր նոր իրադրությունների պայմաններում գլխավորելու հայ ազգային պետականությունը։ Իրենք՝ Արշակունիները դրամներ չէին թողարկում։ Այդ իրողությունը պայմանավորված էր նրանց իրավական կախյալ վիճակով։ Հայաստանում Արշակունիները հայկական գահի վրա ժառանգական իրավունք չունեին։ Թագավորները մինչև III դարը առաջադրվում էին պարթևական Իրանից և օծվում էին կայսերական Հռոմի կողմից։ I—II դարերում Արշակունի հայ թագավորները սեփական դրամ կտրելու իրավունք չունեին։ Այն վերապահված էր Արշակունյաց տոհմի մեծ տանը՝ Իրանի Արշակունիներին՝ Պարթևական թագավորությանը։

Համենայն դեպս ցարդ ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ նրա սահմաններից դուրս Արշակունիների հայկական ճյուղին պատկանող դրամներ չեն գտնվել։ Այդպիսին է եղել երկու հզոր և իրար ներհակ տերությունների՝ Հռոմի և Իրանի միջև շահերի բախման ասպարեզ դարձած Հայաստան երկրի վիճակը, ուր տարածում էին գտնում և անցնում Արևելքի և Արևմուտքի երկրներից դուրս եկած դրամներն ու ապրանքները։ Հայ Արշակունիների վաղ շրջանում, մասնավորապես Տրդատ I (62—75 թթ.) հայոց թագավորի և նրա անմիջական հաջորդների տարիներին միջազգային առևտրի բերումով հայկական քաղաքներն էին թափանցել ոչ միայն Ներոնի (54—68 թթ.), այլև Վեսպասիանոսի (69—79 թթ.), Տիտոսի (79—81 թթ.) ու Դոմիցիանոսի (81—96 թթ.) պատկերներով հռոմեական արծաթյա դրամները, որոնք, սակայն, շրջանառության մեջ այլևս չունեցան այն արժանապատվությունը, ինչ վայելում էին Օգոստոս Օկտավիանոսի արծաթյա դրամները։ Վերջիններս իրենց կշռային չափերով ու արծաթի լիարժեք պարունակությամբ բարձր էին դասվում Ներոնի ետռեֆորմյան դրամներից և պատահական չէր, որ առևտրում նախապատվությունը նրանց էր տրվում։ Հռոմեական դրամների բացարձակ տիրապետությունը Հայաստանի դրամային տնտեսության մեջ դիտվում է ողջ II դարի ընթացքում։ Շրջանառության մեջ եղած վաղ կայսերական դրամների վրա ավելանում էին Տրայանոսի (98—117 թթ.), Հադրիանոսի (117—138 թթ.), Անտոնիոս Պիոսի (138—161 թթ.), Մարկոս Ավրելիոսի (161—180 թթ.) ու Լուկիոս Վե-

բոսի դենարները, որոնց առևտուրը բերում էր ոչ միայն Հռոմեական կայսրության արևելյան ծայրամասերից, այլև Մետրապոլիայից, նրա մայրաքաղաքից։

Հայաստանի քաղաքական պատմության համար ուշագրավ են Տրայանոսի գահակալության տարիներին թողարկված շքադրամները, որոնք յուրորեն արտացոլում են հռոմեական քաղաքականությունը II դարի սկզբին հայոց երկրի հանդեպ։ Այսպես, 115 թ. Արևելքում լույս ընծայված պղնձյա շքադրամներից մեկի վրա պատկերված է Տրայանոսի կիսանդրին՝ շուրջը հունատառ գրություն.... ΟΚΡΑΤΩΡ ΑΥΓ. ΤΡΑΙΑΝΟϹ. ΓΕΡ. Δ..., այսինքն՝ որ նա ինքնակալ է, գերմանացիներին ու դակերին հաղթող։ Սակայն հակառակ կողմին պատկերված է Տրայանոսը կանգնած, ռազմի հռոմեական հագուստով, աջ ձեռքում սաղավարտ, ձախով հենվել է իր նիզակին, իսկ նրա առջևում Հայաստանը՝ կնոջ կերպարանքով, գլխիկոր նստած է գետնին, ուր թափված են սրեր ու վահաններ[39]։ Կայսեր թիկունքին ցույց է տրված հաղթանակի պսակաբեր դիցուհին և այդ ողջ կերտվածքի տակ լատինատառ արձանագրված է. ARMENIA.

Մեկ ուրիշ պղնձյա շքադրամի վրա, որ թողարկվել է 116—117 թթ. Հռոմում, պատկերված է մի կողմից Տրայանոսի կիսանդրին, գլուխը զարդարված դափնեպսակով, շուրջը արձանագրված նրա տիտղոսները, որ ինքնակալ է, ամենաբարո, գերմանացիներին, դակերին, պարսիկներին հաղթող, բարձրագույն քրմապետ, տրիբուն, հյուպատոս վեցերորդ անգամ հայր Հայրենիքի և այլն. („IMP. CAES. NER. TRAIANO OPTIMO AVG. GER. DAC PARTHICO P. M. TR. P COS. VI PP."), իսկ մյուս կողմին պատկերված է Տրայանոսը՝ կանգնած ուղիղ, ռազմի հռոմեական տարազով, գլուխը պսակազարդ, աջ ձեռքին նիզակ, որին և հենվել է, ներքևում՝ ոտքերի տակ, երկու առնական կերպարներ, թիկնած հոսող ջրով լի սափորների վրա, եղեգյա ձողեր բռնած։ Դրանք Եփրատ ու Տիգրիս գետերն են, որոնց միջև անձնավորված է Հայաստանը։ Վերջինս դիտվում է գետնին նստած կնոջ կերպարանքով։ Հռոմի կայսր Տրայանոսը, որ կենտրոնական կերպարն է այդ համայնապատկերում, դրել է իր ոտքը Հայաստանի վրա, իսկ շուրջը գրված է. ARMENIA ET MESOPOTAMIA IN POTESTATEM PR REDACTAE, մեջտեղը S. C. տառերը, այսինքն՝ «Հայաստանը և Միջագետքը հռոմեական ժողովրդի իշխանությանը հպատակեցված սենատի կամքով»[40]։

Սակայն Հռոմում թողարկված պղնձյա այս կարգի շքադրամները շրջանառության տեղական ոլորտից դուրս չէին անցնում։ Այդպիսիները ունեին առավելապես ցուցադրական նշանակություն, նվիրված կայսրության նվաճումների փառաբանմանը։ Հայկական քաղաքներում տարածվել էին Տրայանոսի, Հադրիանոսի և նրանց հաջորդների արծաթյա դրամները, որոնց պատկերատիպը վաղուց արդեն միատեսակ էր դարձել։ Որպես կանոն նրանց վրա ներ-

---

[39] Հիշյալ պղնձյա շքադրամը իրրև դրամային միավոր սեստերցիա է. 30 միլիմետր տրամագծով. պահվում է բրիտանական թանգարանում. Warwick Wroth, Catalogue of the greek coins of Galatia, Cappadocia and Syria, Bologna, 1964, էջ 102, տախտ. XIV, № 5.

[40] Իրրև դրամային միավոր այս պղնձյա շքադրամը սեստերցիա է 22,7 գրամ կշիռով և 35 միլիմետր տրամագծով, պահվում է Հայաստանի պատմության թանգարանում, հայտնի է նաև բրիտանական ու այլ թանգարանների նմուշներով։

կայացվում էին մի կողմից իշխող կայսեր դիմանկարը, իսկ մյուս կողմից՝ պաշտամունքային նշանակության խորհրդանշաններ։ Այսպես, օրինակ, Հայաստանում գտնված II դարի կայսերական դենարների վրա դրոշմած պատկերներով դիտվում էին Հռոմի հեթանոսական դիցարանի նշանավոր աստվածների ու աստվածուհիների՝ Յուպիտերի, Ռոմայի, Նեպտունի, Վիկտորիայի, Ֆորտունայի, Մարսի, Վեներայի, Ազատության, Երջանկության, Համաձայնության, Հույսի, Հավերժության և այլ կուռքերի կարծեցյալ կերպարները։ Հայաստանում գտնված I—II դարերի հռոմեական դրամներով կարելի է տեսնել կայսերական գիմաքանդակների ամբողջական շարքը, արտահայտված դասական արվեստի ռեալիստական ոճով։ Արշակունիների հայկական թագավորության զարգացման այս շրջանում Հռոմի կայսերական դրամները միջազգային առևտրում հանդես էին գալիս միատարր, առանց այլ ծագման դրամների հետ խառնվելու։ Պարթևական դրամները, որոնք Հայաստանում Արտաշիսյանների օրոք լայն տարածում ունեին, արդեն Արշակունիների տիրապետության օրոք II դարում չեն նկատվում գանձերի կազմում։ Եվ այդ իրողությունը պատահականություն չէր, այլ օրինաչափ արտացոլումը պարթևների դրամային տնտեսության սնանկացման, որ դիտվում է նաև հարևան երկրների համար։ Ո՛չ Վրաստանում և ո՛չ էլ Աղվանքում II դարի պարթևական դրամներ չեն գտնվել։

II դարի հայ-հռոմեական հարաբերությունների պատմությունից հիշատակության արժանի է նաև Անտոնինոս Պիոսի (138—161 թթ.) պատկերով պղնձյա շքադրամը։ Այն թողարկվել է Հռոմում, 140 թ.։ Նրա վրա դրոշմած է, մի կողմից, Անտոնինոս Պիոսի կիսադեմ պատկերը, պսակազարդ գլխով, որի շուրջ գրված է. ANTONINVS AVG. PIVS PPTRP COS III (Անտոնինոս Ավգուստոս Պիոս, հայր հայրենյաց, տրիբունյան իշխանության տեր, հյուպատոս երրորդ անգամ)։ Դրամի մյուս կողմի վրա պատկերված են Անտոնինոս Պիոսը և հայոց թագավոր Սոյեմոսը։ Հռոմի կայսրը բարձրահասակ է, նա ձեռքը դրել է հայոց թագավորին, իսկ վերջինս ցույց է տալիս գլխին դրված այն պսակը, որ ստացել է թիկունքին կանգնած Անտոնինոս Պիոսից։ Հայոց թագավորը ներկայացված է հռոմեական տարազով։ Հանդիսավոր օծման այդ տեսարանի շուրջը արձանագրված է. REX. ARMENIIS DATVS (թագավոր հայերին տրված), իսկ ներքևում՝ S. C. (սենատի որոշմամբ)։ Այդպիսի սեստերցիաները շրջանառության մեջ են եղել Հռոմում։

Դրանց պատկերատիպը ցույց է տալիս Հռոմի բացահայտ միջամտությունը Հայաստանի ներքին գործերին։ Անտոնինոս Պիոսի օրոք կայսրության դիրքերը Արևելքում ամրապնդվել էին։ Հայոց գահի վրա իբրև արքա Սոյեմոսը վարում էր հռոմեական քաղաքականություն, որի դեմ 161 թ. հայերը ապստամբվեցին։ Սոյեմոսը փախավ Հռոմ, ուր արդեն կայսրության գլուխն էր անցել Մարկոս Ավրելիոսը իր գահակից եղբոր՝ Լուկիոս Վերոսի հետ։ Հռոմեական բանակները շարժվեցին դեպի Հայաստան և 162 թ. գրավեցին Արտաշատը։ Արշակունյաց գահի վրա վերականգնվեց Հռոմի շահերին հավատարիմ Սոյեմոսի թագավորությունը։ Այդ իրադարձությունների առթիվ կայսրությունը 163—168 թթ. թողարկեց ոսկյա, արծաթյա ու բրոնզե շքադրամներ, որոնք իրենց վրա ունեցած գրություններով ու պատկերներով հիշատակում են Հռոմի այդ տարիների հաղթանակների և Հայաստանի պարտյալ ու կախյալ քաղաքական վիճակի մասին։

Այսպես, 163—164 թթ. Հռոմում թողարկված ոսկյա և արծաթյա շքադրամներից պահպանվել են Հայաստանին նվիրված առերուներ և դենարներ, որոնց վրա պատկերված է մի կողմից Մարկոս Ավրելիոսի կիսանդրին, շուրջը գրված. M. ANTONINVS AVG. ARMENIACVS P. M., այսինքն՝ Մարկոս Անտոնինոս Ավգուստոս, Հայաստանին հաղթող, ծայրագույն քրմապետ։ Մյուս կողմին պատկերված է Հայաստանը կնոջ կերպարանքով, գլխիկոր նստած գետնին, թիկունքում նրա զենքերը՝ ի նշան պարտության ցից հանված և տակը մակագրված. ARMEN, իսկ շուրջը կարդացվում է Հռոմի կայսեր տիտղոսների շարունակությունը, որ քանի-երորդ անգամ տրիբունյան իշխանության տեր է, ինքնակալ, հյուպատոս, նշված լատինատառ կրճատումներով։ Պղնձյա շքադրամների (սեստերցիաների ու դուպոնդիաների) վրա երբեմն Հայաստանը պատկերվում էր Հռոմի հաղթության դիցուհու ոտքերի մոտ նստած, ողբացյալ կնոջ նույն կերպարանքով, ավար դարձած իր զենքերի հետ։ Մարկոս Ավրելիոսի տիտղոսները հաճախ հիշատակում էին, որ նա հաղթել է ոչ միայն հայերին, այլև պարթևներին ու մեդացիներին։



Հռոմեական դրամ, մ. թ. 163 թ.։

Նույն պատկերատիպի ոսկյա, արծաթյա ու պղնձյա շքադրամներ 163—164 թթ. թողարկել են Հռոմում, նաև Լուկիոս Վերոսի անունից, նրա դիմանկարով և Հայաստանին վերաբերող խորհրդանշաններով։

Ուշագրավ է Լ. Վերոսի ոսկե շքադրամը, թողարկված Սոյեմոսին երկրորդ անգամ հայոց թագավոր կարգելու հիշատակին։ Այդ ոսկեդրամը կտրվել է 164 թ. Հռոմում։ Նրա մի կողմի վրա դրոշմած է Լուկիոս Վերոսի դիմաքանդակը և շուրջը արձանագրված է L. VERVS AVG. ARMENIACVS, իսկ մյուս կողմի վրա ցույց է տրված Սոյեմոսի օծման պաշտոնական արարողությունը. բեմի վրա նստած է Լ. Վերոսը ռազմի հռոմեական համազգեստով, նրա կողքին երկու զինվորականներ, ներքևում՝ բեմի առաջ կանգնած է հայոց թագավորը, որը աջ ձեռքով գլխին է մոտեցրել իր պսակը, ստացված վերևում բազմած Հռոմի վեհապետից՝ Լ. Վերոսից։ Վերջինս մեկնել է իր աջը դեպի Սոյեմոսը։

Այդ համայնապատկերի շուրջ լատինատառ կրճատումներով նշված են կայսեր տիտղոսները. TR.P. IIII. IMP. II COS. II, այսինքն տրիբունյան իշխանության տեր չորրորդ անգամ, ինքնակալ և հյուպատոս երկրորդ անգամ, իսկ ներքևում երկու տողով՝ REX. ARMEN ‖ DAT. (=թագավոր հայերին տրված)։ Սոյեմոսի թագադրության առթիվ թողարկված Լ. Վերոսի շքադրամներից հայտնի են նաև պղնձյա խոշոր ու միջին արժեչափի միավորներ՝ սեստերցիաներ ու դուպոնդիաներ, հիմնականում նույն պատկերատիպերով, ինչպես և որոշ տարբերություններով, բոլորն էլ թողարկված Հռոմում 164 թ.։ Այնքան մեծ է եղել կայսրության համար II դարի 60-ական թթ. Հայաստանի ու Պարթևստանի դեմ տարած հաղթանակների նշանակությունը և ընդհանրապես Մ. Ավրե-

էիոսի ու Լ. Վերոսի օրոք Արևելքում Հռոմի գերիշխանության պահպանման իմաստը, որ հռոմեական շքադրամների թողարկումը մասսայական էր դարձել։ Պահպանվել են պղնձյա շքադրամներ, որոնց վրա դրոշմված պատկերներն ինքնըստինքյան խոսում են Հռոմի նվաճողական քաղաքականության մասին։

Այսպես, օրինակ, դրանցից մեկի վրա պատկերված է չորս ձիերով լծված մի մարտակառք, որը վարում են Մ. Ավրելիոսը և Լ. Վերոսը, իսկ առջևում դիտվում են հռոմեական ռազմիկներ, հաղթության հուշարձան, ինչպես նաև պատերազմի աստված Մարսը[41]։ Մեկ ուրիշ շքադրամի վրա, որ թողարկվել է Հռոմում 164 թ., ցույց են տրված Մ. Ավրելիոսն ու Լ. Վերոսը, կանգնած իրար դիմաց, երկուսն էլ ռազմի հանդերձանքներով, իսկ նրանց վերևից իջել են հաղթության թևավոր դիցուհիներ և դափնեպսակ են դնում Հռոմի տիրակալների գլուխներին։ Մինչդեռ ներքևում Եփրատ ու Տիգրիս գետերն են ցույց տրված և ծունկի չոքած մի առնական կերպարանք՝ հանդիպահայաց տեսքով։ Վերջինս Հայաստանի Արշակունյաց թագավորությունն էր[42]։ Ուշագրավ է նաև 168 թ. Հռոմում թողարկված պղնձյա մեկ այլ շքադրամ, որի վրա պատկերված է Լուկիոս Վերոսը ձիու վրա, նիզակը ձեռքին արշավող, իսկ ներքևում՝ ձիավորի ոտքերի տակ ընկած է հայ զինվորը։ Հեծյալին հետևում են երկու հռոմեական ռազմիկներ, որոնցից մեկը բերում է նրա սաղավարտը, իսկ մյուսը՝ կայսրության արծվակիր դրոշը։ Ռազմաշունչ այս պատկերաքանդակի տակ արձանագրված է. ARMENIA (=Հայաստան), շուրջը՝ TR. P. VIII. IMP. IIII. COS. III., այսինքն Լ. Վերոսի տիտղոսները, որ նա 8-րդ անգամ տրիբունական իշխանության տեր է, ինքնակալ չորրորդ և հյուպատոս երրորդ անգամ։ Բրոնզե հիշյալ շքադրամը պահվում է Ֆրանսիայի ազգային մատենադարանում[43]։ Կարելի է հիշատակել այլ պատկերներ այս նույն թեմատիկայից, բայց դրանց բոլորի իմաստը մնում է նույնը՝ տարածել Հռոմի կայսրության փառքը, ազդել նվաճված ժողովուրդների վրա։ Սակայն II դարի 60-ական թթ. մինչև III դարի սկիզբը Հայաստանի դրամական շրջանառությանը բնորոշ էին ոչ թե շքադրամները, այլ համընդհանուր պատկերատիպի կայսերական դենարները, որոնց առևտուրը հայկական քաղաքներն էր բերում թե՛ մետրոպոլիայից, և թե՛ Մերձավոր Արևելքի վաճառաշահ կենտրոններից։ Այդ տեսակետից անմիջական վկայություն է Գառնիում գտնված հռոմեական գանձը։ Նրա մեջ ամփոփված են հետևյալ 49 դրամները.

Արծաթ դենար, Վեսպասիանոսի (69—79 թթ.) տարիներից				8	հատ
»	»	Տիտոսի (79—81 թթ.)	»	1	»
»	»	Տրայանոսի (98—117 թթ.)	»	3	»
»	»	Հադրիանոսի (117—138 թթ.)	»	13	»
»	»	Անտոնինոս Պիոսի (138—161 թթ.)	»	15	»
»	»	Մ. Ավրելիոսի (161—181 թթ.)	»	6	»
»	»	Կոմմոդոսի (182—192 թթ.)	»	2	»

41 Henry Cohen, Description historique des monnaies frappees sous l'empire Romain, tome III, Paris, 1883, էջ 199։

42 Նույն տեղում, էջ 205։

43 Նույն տեղում, էջ 174 № 16։

Գանձը լիովին արտացոլում է դրամային շրջանառության այն կազմը, որ եղել է Հայաստանում II դարի վերջերին։ Այդպիսին է եղել ընդհանրապես տարածված հռոմեական դրամների կազմը II դարի կեսից մինչև III դարի առաջին քառորդը։ Ըստ էության Անտոնինոս Պիոսի, Մարկոս Ավրելիոսի և Կոմմոդոսի գահակալության տարիներին հռոմեական դրամների համաշխարհային տարածումը հասել էր իր աշխարհագրական առավելագույն ընդգրկմանը և Հայաստանը, իբրև բուֆերային երկիր Արևելքի ու Արևմուտքի միջև, ամբողջությամբ գտնվում էր հռոմեական դրամներով կատարվող ապրանքափոխանակության ոլորտում։ Հենց այդ ժամանակներում, II դարի վերջերին ծագում են հայոց մայրաքաղաք Արտաշատի պղնձյա դրամները։ Դրանց թողարկումը սկսվել էր 183 թ. և պայմանավորված էր ոչ միայն ներքին շուկայի զարգացմամբ, այլև քաղաքական այն դրությամբ, որ նվաճել էր Հայաստանի մայրաքաղաքը Կոմմոդոսի (182—192 թթ.) գահակալության տարիներին։ Մինչ այդ հայկական քաղաքներից և ոչ մեկը իր ինքնավարության դրամները չէր թողարկել։

Ուշագրավ է, որ Արտաշատի քաղաքային դրամները շրջանառության մեջ էին մտնում ոչ թե Հռոմի կայսեր կամ հայոց Արշակունի թագավորի անունից, այլ իրեն՝ մայրաքաղաքի անվան ΑΡΤΑΞΙCΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩC հունատառ արձանագրությամբ։ Արևելքում կայսրության գերիշխանության մեջ միջազգային առևտրի առանձին քաղաքներ նվաճել էին այդ իրավունքը և դրամներ էին թողարկում։ Այդպիսին էին Անտիոքը, Ապամեան, Լաոդիկեան, Նիկոպոլիսը, Դամասկոսը և շատ ուրիշ քաղաքներ։ Արտաշատում կերտված դրամները իրենց պատկերատիպերով դեռևս պահպանում էին հելլենիզմի ավանդները։ Նախ և առաջ դրանց վրա դրոշմված պատկերները ունեին դիցաբանական նշանակություն, նվիրված մայրաքաղաքի բախտի, նրա ապահովության աստվածուհու պաշտամունքին, որ անցյալում դիտվում էր հելլենիստական քաղաքային դրամների վրա։ Բացի այդ, արձանագրությունները հունարեն էին, չնայած երկիրը վաղուց գտնվում էր հռոմեական գերիշխանության ներքո և շրջանառության մեջ եղած դրամական միավորների գերակշռող զանգվածը կայսերական դրամներ էին լատինատառ արձանագրություններով։

Արտաշատի դրամը, մ. թ. 183 թ.։

Հայաստանում թողարկված դրամների շարքում Արտաշատի պղնձյա դրամը, իրաբեբախտաբար, շատ լավ է պահպանվել։

Նրա վրա պատկերված է քաղաքամոր դեղեցիկ գլուխը աշտարակաձև թագով, որ դիտվում է դրամի մի կողմից, իսկ մյուս կողմին՝ հաղթանակի թևավոր դիցուհին առաջացած քայլվածքով դափնեպսակ է պարզել քաղաքի անվան վրա։ Աստվածուհու առջևում նշված է I, թիկունքին մոտ՝ ZΞ գրերը, շուրջը արձանագրված՝ ΑΡΤΑΞΙCΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩC, այսինքն՝ «Արտաշատի մայրաքաղաքի» դրամը[44]։ Կշիռը 5,60 գրամ, տրամագիծը 20 միլիմետր։

Սակայն Արտաշատի քաղաքային դրամները պահպանվել են հատ ու կենտ նմուշներով և ընդհանրապես հավվագյուտ են։ Լինելով պղնձից, դրանք արտաքին շուկաներում ընդունելի չէին և քաղաքային շրջանառության ներքին ոլորտից հեռու չէին անցնում։ Բացակայած չէ, որ առաջիկայում Արտաշատի ավերակների հնագիտական պեղումները ի հայտ բերեն այդ դրամներից նոր նմուշներ։ Այդուհանդերձ, երբ Արտաշատում դրվագում էին նրա քաղաքային կյանքի հիշյալ դրամները, Հայաստանի դրամական շրջանառության բնորոշությունը կազմում էին Հռոմի կայսրության արծաթ դրամները։ Մարկոս Ավրելիոսի, Լուկիոս Վերոսի և Կոմմոդոսի դենարների հետ II դարի վերջին հայկական քաղաքներն էին թափանցել նաև հռոմեական կայսրուհիներ Ֆաուստինայի, Կոիսպինայի (180—183 թթ.) և Յուլիա Դոմնայի (193—211) պատկերներով արծաթյա դրամական միավորները։ Մինչև III դարի սկիզբը այլ փոփոխություններ Հայաստանի դրամական շրջանառության մեջ չեն դիտվում։ 214 թ. Հռոմի կայսր Կարակալայի (198—217 թթ.) դրամական ռեֆորմով շրջանառության մեջ են մտնում արծաթյա նոր դրամային միավորներ, այսպես կոչված «Անտոնինիաններ», որոնք շատ շուտ կորցրեցին իրենց արծաթի քաշը և, արժեզրկված միջազգային առևտրում, Հայաստանի դրամային տնտեսության համար էական նշանակություն չունեցան։ III դարի առաջին կեսին թուլանում է հռոմեական դրամների հոսանքը, բայց արդեն սկսվել էր բոլորովին նոր պատկերատիպով և կշռային նոր չափերով թողարկված արծաթյա դրամների շրջանառությունը։ Դրանք Իրանում հաստատված Սասանյան հարստության դրամներն էին, որոնց վիճակված էր մինչև VII դարը տիրապետող դառնալ Հայաստանի և հարևան երկրների դրամական տնտեսության մեջ։

ИЗ ИСТОРИИ ДЕНЕЖНОГО ОБРАЩЕНИЯ В АНТИЧНОЙ АРМЕНИИ

(конец V в. до н. э.— начало III в. н. э.)

Х. А. МУШЕГЯН

(Резюме)

Денежное обращение в Армении возникло при Ахеменидах и развилось в сфере внешней и внутренней торговли.

Наиболее ранние монеты, найденные в Армении, относятся к V в. до н. э. Они не являются характерными для местного рынка, где пока еще господствовал натуральный обмен товарами.

Столетие спустя ахеменидские сатрапы Армении—Тирибаз в Киликии и Оронтас в Мизии чеканили монеты, которые обращались в ос-

44 Պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում, № 5374։

новном вне пределов Армянского нагорья и прямого отношения к истории денежного хозяйства Армении не имели.

С начала III в. до н. э., благодаря международной торговле, в армянские города проникают эллинистические монеты, в частности драхмы и тетрадрахмы Александра Македонского.

По мере дальнейшего углубления товаро-денежных отношений укореняется аттическая денежно-весовая система, по которой выпускают свои монеты ведущие монархии эллинистического мира.

С конца III и в течение II в. до н. э. начинают появляться первые армянские монеты, выпущенные в обращение армянскими царями Софены и Малой Армении. С точки зрения типологии, эти монеты имеют общие черты с монетами современных им царей Селевкидской династии. Принцип денежного счета и весовые нормы продолжают оставаться аттическими. В сферу внешней торговли монеты Софены и Малой Армении не проникали, будучи медными, они сохраняли сугубо местное значение.

С конца II в. до н. э., в связи с возрастанием могущества армянской державы Арташесянов, наблюдается оживление международной торговли страны и одновременно более значительный выпуск армянских монет эллинистического типа. В обращение поступали денежные единицы Армении.

Начиная с Тиграна I (123—96) и кончая Тиграном V (ок. 6 г. н. э.) почти все царствующие представители этой династии имели свои монеты. Наиболее значительными были монеты Тиграна Великого (95—55) и Артавазда II (55—34).

С начала I в., по мере усиления господства римской империи, сокращается и затем совершенно прекращается выпуск армянских монет. В период I—II вв. широкое распространение в Армении получают римские монеты общеимперского типа. Распространение парфянских монет очень слабо. В конце II в. происходит оживление во внутренней торговле и столица Армении—Арташат начинает выпуск своих медных монет. Уже в следующее столетие римская денежно-весовая система в Армении теряет свое ведущее значение. С 20-х гг. III в. денежное обращение в Армении вступает в новую фазу развития.